

# ՀԱՅ ՄՎՆՈՒՄ

ՊԱՆՏՈՒԹԵՐԹ

Բ.Ս.Ը.Ս. Ի

հիմնվել 1918 իւ



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDE EN 1918



## "ՀԱՅ SCOUT"

Գ. ՏՄ.ԲԻ ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏ. 1930 N° 9-10 AOUT-SEPTEMBRE (3<sup>e</sup> année)



ԱՅՍ ԹԻԻՆ ՀԱՏԸ 3,50 ԳՐ.



# Հ Ա Յ Ս Կ Ա Ա Ռ Ի Տ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ Ա Մ Ս Ա Յ Ե Ր Յ

## ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՂԻՆ

Ճրամատ, Սուրբա, Յուզնաստան, Պուլիարիա, ՌուՄանիա..... 35 ֆրանք  
Միւս երկիրներ..... 2 սուլար

ԱՅՍ ԹԻՒՆՆ ԸԱՏԸ 3-50 ՖՐԱՆԿ

(ԳԱՅԱՐՅԵԱՅ ՉՈՒՆՆԵՐ)

Պարզ նամակ, յղուած, Նկար, թերթ, գիրք եւայլն դրկել հետեւեալ հասցէին

Revue HAI-SCOUT, U. G. Arménienne  
1, Rue Saulnier, Paris IX

Դրամ, ապահովագրեալ նամակ, չէք, մանտափոստ դրկել գանձապետին՝ հետեւեալ հասցէով:

Mr. H. Zahredjian, 53 Faub. Montmartre, Paris IX

Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի շրջանային յանձնաժողովի հասցէն է՝

U. G. Arménienne de Culture Physique et de Scoutisme  
1, Rue Saulnier, Paris IX, 5րդ յարկ, մէթրո Cadet



# ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

ՊԱՆՏՈՒԱԹԵՐՐ  
A. U. C. U. P.  
FONDÉ EN 1910 P.L.



ORGANE  
DES SCOUTS ARMÉNIENS  
FONDÉ EN 1918

## "HAI SCOUT"

Գ. ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ

N° 9-10

AOÛT-SEPTEMBRE (3<sup>e</sup> année)

### ՎՍՏԱՀ ԵՒ ԱՄՈՒՐ... ♦♦♦



Ահա ահա սիկ տարի մը, եւ մենք բաւական ճամբայ ենք կտրած՝ անցնելով փշոտ եւ անյարգ ուղիներէ, մաքառելով դժուարութիւններու եւ արգելքներու դէմ, համոզելով եւ ապահովութիւն ներշնչելով բոլորին, միեւնոյն ատեն խնայելով մեր ուժերը:

Հիմա ընդարձակ դաշտ մը կայ բացուած մեր առջեւ: Ամէն կողմէ ոգեւորիչ ձայներ է որ կը լսուին: Մեր խնայած ուժերն ու փորձառութիւնները աշխատանքի կը կանչուին պատանեկութեան եւ երիտասարդութեան կողմէ:

Ահա որ եւ անկողան ժողովուրդի մը զաւակներն են որ կ'ՈՒՋԵՆ ԱՊՐԻԼ եւ իրենց հետ ապրեցնել ցեղին արժանիքները, կ'ուզեն ցոյց տալ աշխարհի թէ իրենք կան եւ արժէք մը կը ներկայացնեն, ունին իրաւունքներ իբր ազգ ապրելու՝ ժողովուրդներու եւ ազգերու սա խառնաճաղանճին մէջ, անոնք չեն ուզեր քալել քիււերու տակէն պատերուն քսուելով մութացիկի պէս, չեն ուզեր սլճնուիլ ուրիշներու փետուրներով ծածկելու համար իրենց ինքնութիւնը հակառակ «իմաստուններ» ու թելադրանքին:

Այսօր, Ախրիկէի Խափշիկն իսկ չ'ուզեր ոտքի տակ տալ իր ցեղային արժանապատուութիւնը եւ ինքնուրոյնութիւնը, իսկ հայը իբր ժողովուրդ, դարերու իր մշակոյթովը պիտի զիջէ՞ր ծախել իր նուիրական արժէքները, բարձր սրտաւ ու իր իրաւունքը:

Թող ծիծաղին «խելացի»ներն ու հեռատեսները մեր ճիգերուն վրայ, անտարբեր՝ ուսերնին թող թոթովեն մեր ետեւէն, մենք կը շարունակենք ճամբան՝ բարձրաճակատ եւ հստատ, եւ օր մը, վստահ ենք, բոլոր գլխարկները վար կ'առնըին եւ գլուխները կը խոնարհին մեր դրօշին ու մեր ազատանի կեցուածքին առջեւ: Այն օրը մենք հրապարակի վրայ ենք լէզէտններով առոյգ եւ անճնափստահ, ազգային աւանդութիւնները եւ արժէքները շալկած՝ ընծայաբերելու համար ազատ հայենիքի մեհեանին, նուիրելու համար իր բուն տիրոջը՝ հայ ժողովուրդին, եւ մեր կուրծքերը կ'ուռին այն օր, սրբազան հպարտութիւնով մը...

Համնելու համար այդ գեղեցիկ օրուան, պէտք է քալել անշտապ, սակայն փստահ եւ ամուր:

Լսեցէ՛ք, հայ երիտասարդութեան ձայնն է որ կուգայ չորս հովերէն, կեանքոտ եւ վճռական:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ

329-2000



### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ

Այս խորագրին տակ ֆրանսական մեծ օրաթերթ մը ընդարձակ զրույթիւնով մը կուտայ մանրամասնութիւնները, 18 մայիս 950 *Wolneyի* (Անգլիա) մէջ տեղի ունեցած սկաուտական կարեւոր հաւաքոյթին, որուն ներկայ եղած են սկաուտ պետ՝ Լորտ Պէտրն Բաուըլ և բազմաթիւ պետական անձեր:

Հազարաւոր սկաուտներ իրենց ծնողներուն ընկերակցութեամբ, ինչպէս նաև սկաուտութեան բարեկամներու բազմութիւն մը խանդավառութեամբ ունկնդրած են *Graumar Schoolի* տնօրէն *Mr. R. Wilkinsonի* խրախուսիչ ճառը, որով անգամ մը եւս հաստատուեցաւ սկաուտութեան զրաւած կարեւորութիւնը Անգլիոյ երիտասարդութեան մէջ, և եթէ նայինք Անգլիական թերթերու գրածներուն, ասոր նման շատ քիչ անգամ հաւաքոյթ եղած է, տպաւորիչ և հիանալիօրէն կազմակերպուած՝ ճանչցնելու համար սկաուտութիւնը ժողովուրդին:

*Mr. Wilkinson* որ միեւնոյն ատեն կազմակերպիչը եղած է սոյն հաւաքոյթին, պատմական ճառով մը բացատրած է երզումները նախ զայլիկին, յետոյ սկաուտին և ի վերջոյ երէցներու, որոնք սկաուտութեան երեք հանգրուանները կը կազմեն:

«Գայլիկը, կ'ըսէ *Mr. Wilkinson* իր ճառին մէջ, 8-10 տարեկան տղան է, այն պահուն ուր կեանքը իրեն համար երկար և փառքերով լեցուն արկածախնդրութիւն մըն է, ու աշխարհ յաւերժական պատմութիւն, ոչ մէկ հին բան կայ՝ ամէն ինչ նոր է իրեն համար արեւու տակ: Օրուան մէջ պատահած ամէն զէպք մէջ մէկ արկածախնդրութիւն է, խանդավառութեամբ ստանձնուած և հպարտութեամբ գլուխ հանուած, նոյն իսկ ամենէն աննշան պատահարը սոյն տարիքին համար վէպ մըն է. և որովհետև ամէն վէպի մէջ հերոս մը գոյութիւն ունի, զայլիկը ինքզինքը այդ հերոսին տեղ կը դնէ»:

«Նոյն տարիքը կրող տղաքը, կարելի չէր գայլիկներէ զատ, ուրիշ որեւէ բանի նմանցնել: Երիտասարդ հոգիներու եղբայրակցութիւն, խրախուսանքով լեցուն, հաստատուն հաւատք և վստահութիւն ինքն իր վրայ: Հերոսներ, ճշմարիտ հերոսներ կը նկատեն ինքզինքնին, պայքարող միշտ Սուրբ-Ֆէոդոզի նման, եսասիրութեան վիշապին դէմ, անոնք իրենց երեւակայութիւնը կը մեղմեն իրենց առաջնորդին՝ ձերուկ զայլին աջակցութիւնով միայն»:

«Սկաուտը, կը շարունակէ *Mr. Wilkinson*, 12-17 տարեկան պատանին է, ամենէն կարեւոր շրջանը կեանքի»:

«Հասարակ հանգոյցէն մինչև մայր եկեղեցիի մը շինութեան ճարտարապետութիւնը, կրակ վառելէն մինչև զազափարներու տրամաբանութիւնը: Երկու մէթոտ կայ. լաւ մէթոտ և զէշ մէթոտ: Ապացուցուած է որ, որ եւէ գործի մէջ ամենազէշ մէթոտը նախ ինքզինքով զբաղիլն է, իսկ կեանքի մէջ միակ լաւագոյն ճամբան՝ ամբողջ սրտով ու հոգիով նետուիլն է, որքան ալ մեծ ըլլայ ստանձնուած գործը: Այս է ահա սկաուտութեան գլխաւոր նպատակը, ան՝ առիթկուտայ պատանիին իր վերացական համակրանքը գործնական օգնութեան և իր մտացիութիւնն ու ֆիզիքական կարողութիւնները կեանքի պահանջներուն յարմարցնելու»:

«Այս կերպով պատրաստուած պատանիին համար սկաուտիզմը օգտակար նեցուկ մըն է, կեանքի դժուար ճամբէն անցնելու, մատնանշելու վտանգները և առաջնորդելու ուրիշները, որոնք անտեղեակ են»:

*Mr. Wilkinson* ասպա կ'ուղղէ խօսքը երէցներուն որոնք եկած էին սկաուտական շրջանը աւարտելէ վերջ, «երէց» իրենց յատուկ երզումը ընելու:

«Այն միջոցին ուր դուք սկաուտ էիք, կեանքը, առանց դուք նշմարելու փոփոխութիւն կրեց, ձեր երեւակայութիւնները իրականութիւններու փոխուեցան, և ձեր ստացած կրթութիւնը ձեզի գործնական կերպով սորվեցուց թէ, կեանքի մէջ կայ որքան առանձնաշնորհ



նոյնքան և պատասխանատուութիւն,  
և թէ կեանքը իր բոլոր գեղեցիկ երե-  
ւոյթներուն տակ ունի մէկ լուրջ  
նպատակ:»

«Տասն եօթը տարեկանին «երէց»ներ  
եղաք, ինչպէս որ ամէն զայլիկ սկառւտ՝  
և ամէն սկառւտ ալ հաւատարիմ իրեն  
երգման՝ երէց կ'ըլլայ: Մինչեւ ձեր կեան-  
քին վերջը կը մնաք երէցներ և զիտցէք  
որ, անոնք երբէք երիտասարդ չեն մեռ-  
նիր որովհետեւ կեանքը, անհրաժեշտ  
պէտք ունի անոնց: Անգամ մը եւս կրկ-  
նեմ, որքան ատեն որ սկառւտ էիք, ամ-  
բողջ ձեր շարժումը կ'ամփոփուէր հետեւ-  
եալ բառերուն մէջ «սկառւտը եղած է  
օգնելու եւ փրկելու համար իր նմանները  
եւ ընկերները»: Ներկայիս մէկ բառ  
միայն կը բովանդակէ ձեր պարտակա-  
նութիւնը «ծառայել»:

«Ահա թէ ինչու համար երէցներու  
քննութեան այս հանդէսը սարքելով ու-  
ղեցինք նմանութեան եզր մը ցոյց տալ  
այն շրջանին հետ, ուր խոչալը և նուի-  
րումը հեռակէտ մըն էր: Այն երէցը որ  
եղած է նախ զայլիկ, և ապա սկառւտ,  
(ինչպէս միջին դարու ասպետները կը  
սկսէին նախ ծառայութեամբ և յետոյ  
իրը վահանակիր և ապա ասպետ), իրեն  
ասպետութեան զաւազանը շահած է, ան  
այլեւս ճշմարիտ կեանքի պայքարին մէջ  
մտնելու տարիքին հասած է:»

«Հանդէսին աւարտման նախօրեակին,  
ան իր ամբողջ անցեալը աչքին առջեւ  
կը բերէ մէկ կողմ ձգելով ինչ որ այդ  
շրջանին մէջ կեղծ ու անօգուտ էր, ուժով  
կառչելով այն ամէնուն՝ որ ուղիղ և ճշ-  
մարիտ է:»

«Ան կ'արտասանէ այլեւս իր երգումը,  
հոգեւին կապուելով իր պետերուն, կ'անց-  
նի ամենէն կատարեալ և ազնուական աս-  
պետներու կարգին՝ «երէց»ներու ընտա-  
նիքին եզրայրակցութեան մէջ, իրեն  
համար մնալով իբր մուտքի խօսք՝ «ծա-  
ռայել»:

Այսպէս, երրորդութեան մը մէջ  
միացած կը գտնուի սկառւտութեան  
մեծ նպատակը՝ երեք միլիոնէ աւե-  
լի, եզրայրակցական նոր ասպետներու  
միութիւնը: Թարգմ. վ. Թ.

## ՆԱՄԱԿՆԵՐ

ՍԻՐԵԼԻ ԳՐԻԳՈՐ,

Վերջին անգամ խոստացած էի խմբա-  
կի ոգիի մասին կրկին գրել:

Հիմայ որ առաջնորդ եղած ես, խմբա-  
կիդ մէջ սկառւտական ոգին վառ պա-  
հելու համար պէտք ունիս աշխատու-  
թեան, եւ մանաւանդ քու վարքովդ օրի-  
նակ ըլլալ անոնց: Ահա կը տեսնես թէ դերդ-  
որքան մեծ է: Երկու ճերմակ երիզ կապել  
եւ ունենալ 6-7 սկառւտներ շատ դիւրին է,  
բայց զանոնք առաջնորդելը շատ դժ-  
ւար՝ եթէ չունենաս պարտականութեանդ  
գիտակցութիւնը:

Առաջին պարտականութիւնդ է քեզ  
սիրցնել սկառւտներուդ եւ յարգուիլ ա-  
նոնցմէ՝ ոչ թէ վախի ազդեցութեան տակ  
հնազանդեցնել քու հրահանգներուդ, ան-  
գամ մը որ կրցար քեզ սիրել եւ յարգել  
տալ գործը շատ կը դիւրանայ: Հետա-  
քըքուէ խմբակիդ բոլոր գործերով ա-  
ռանց զանոնք քեզի մենաշնորհ ընելու, բո-  
լոր գործերը բաժնէ սկառւտներուդ մէջ  
իրենց ունեցած կարողութեան համեմատ:  
Մի արհամարհե՛ր ոչ ոք, որովհետեւ քու  
անկարող կարծած մեկ սկառւտդ կրնայ  
շատ մեծ գործեր տեսնել, եթէ երբեք ա-  
ռիւթը տաս, օգնես իրեն, վարժեցնես զին-  
քը: Սկառւտներդ աշխատութեան մղէ  
բայց նախ դուն տուր օրինակը եւ թելա-  
դրէ զանոնք որ քեզի հետեւին: Ոչ ոքի  
նախապատուութիւն տուր, այդպէսով  
նախանձ եւ ռիսակալութիւն կ'ստեղծես  
խմբակիդ մէջ, ասոր համար ուշադրու-  
թիւն ըրէ սկառւտական ոգի ունեցող սկա-  
ռւտներ ունենալ:

Զգուշացիր անոնց արժանապատուութիւ-  
նը վիրաւորելէ, որքան որ պզտիկ ենսակայն  
ունին այդ զգացումը, նոյնպէս զգուշա-  
ցիր անոնց մէջ եսասիրութիւնը եւ սնա-  
փառութիւնը արթնցնելէ:

Իւրաքանչիւր սկառւտի վարքին մա-  
սին՝ թէ ընտանիքին մէջ թէ դուրսը եւ  
թէ խմբակիդ մէջ հետաքրքրուէ եւ սխալ-  
ները տես եւ ըստ այնմ ուղղել ջանայ, իւ-  
րաքանչիւրին խառնուածքին, ստացած  
կրթութեան համեմատ: Գիւրգարքիւ տղու



մը երբ պատիժ տաս, կը ձգէ կ'երթայ, պէտք է անոր համեմատ խօսքեր ու յանդիմանութիւններու միջոց խորհիս:

Ահա պզտիկ դրուագ մը այս պայմանները չը գիտցող առաջնորդի մը կեանքէն:

Խմբակին մէջ ունէր շատ խելացի քսկառու մը եւ կարդալ գրել չգիտցող սկառու մը, նաեւ շատ գէշ բնաւորութեամբ եւ գործէ փախուստ տուող քսկառու մը: Նախապատուութիւն կուտար այդ խելացի սկառուին եւ գործերը կը յանձնէր անոր, ան էր որ միշտ կը յառառաջանար, կ'ստանար նշաններ իրարու ետեւէ, միւսները կը տեսնէին այս վիճակը, եւ ահա սկսաւ նախանձն ու ռիւք, տղաքըչէին յարգեր առաջնորդը: Խմբակը այլեւս խանգարուած էր, ոչ ոք գործ տեսնել կ'ուզէր, իսկ «խելացի» սկառուը այնքան ետասէր եղած էր որ չէր հետաքրքրուէր այլեւս խմբակով այլ միայն իր շէքանշանները շատցնելու ետեւէ էր:

Խեղճ առաջնորդը շուարէր մնացեր էր, վերջապէս օր մը դիմեց խմբապետին եւ խորհուրդ ուզեց այս անկերպարան վիճակէն դուրս ելլելու համար: Խմբապետը քննութիւն կատարեց եւ տեսաւ որ ուղղակի պատճառը առաջնորդն է, որովհետեւ բոլոր խմբակին գործերը կեդրոնացուցած էր իր եւ «խելացի» սկառուին ձեռքերուն մէջ, իսկ միւսները անտեսուած էին: Կանչեց զինքը եւ կարգադրութիւններ ըրաւ, բաժնեց գործերը իրենց կարողութեան չափով, թէեւ առաջնորդը առարկեց թէ մէկը որ կարդալ գրել իսկ չի գիտեր միւսը որ աշխատութենէ կը փախչի ինչպէ՛ս կուզես որ գործ տեսնեն: Ահա վերջապէս մատը վէրքին վրայ դրած էր, «դու առաջնորդ ես մէկը պէտք է գտնես որ այդ տղուն կարդալ գրել սորվեցընէ, իսկ միւսը ձեռքիդ տակ պէտք է առնես ու աշխատելու վարժեցնես, քու պաշտօնդ ոչ թէ միայն խելացիներով զբաղիլ է այլ՝ պէտք է միւսներուն աւելի ուշագրբութիւն դարձնես, քանի որ անոնք աւելի պէտք ունին քու օգնութեանը»:

Առաջնորդը հետեւեցաւ խմբապետին

# ԳԵՂԵՑԻԿ ՕՐ ՄԸ

## ՀԱՆԴԷՍ ԵՒ ԲԱՆԱԿՈՒՄ

### ԿՂՐՏԱՆ - ՓԻԻԻ-ՊԻՎԷՐ (ՄԱՐՍԷՅԼ)

*Մարտիլիոյ սկառուները, զեղեցիկ զաղափարը յղացած էին հանդէս մը տալ կարտանի մէջ՝ 31 օգոստոսին: Տեղոյս հայութիւնը անհամբեր կը սպասէր այս հանդէսին: Սակայն Հ. Մ. Ը. Մ. ի երիտասարդ անդամներէն Պ. Ժիրայր Տէրատէրեանի ցաւալի մահուան և յուզարկաւորութեան ի յարգանս յետաձգուած էր սեպտեմբեր 7ին:*

*Շարաթ օր, 6 սեպտեմբերին, յիսուն սկառուներս, մասնաւոր ինքնաշարժով ճամբայ կ'ելլենք Մարտիլիայէն, հետաքրքիր բաղմութիւնը շրջապատած էր կառքը և կը սպասէին մեկնումի: Տղաքը Մարտիլիայէն երգելով ուրախ զըլարթ, երեկոյին կը հասնինք Կարտան ուր ժողովուրդը կը սպասէր մեզ: Երգելով Յէ՛, օ՛հէ՛» կը մտնենք քաղաք և կառքը, կանգ կ'առնէ սրահին առջեւ: Տղաքը խմբապետին հրամանին վրայ շարքի կը կենան և կը հաւաքեն իրենց զոյքերը, պատրաստ մեկնելու դէպի մօտակայ բարձունքը՝ զիշերային բանակումի համար: Ժողովուրդը հետաքրքիր և զարմա-*

տուած խորհուրդներուն եւ ամիսներ ետք ինքն ալ զարմացաւ թէ ինչպէս կ'ըլլայ որ այդ կարդալ գրել չի գիտցող տղան՝ խմբակին հաշիւը կը բռնէր, իսկ աշխատութենէ փախուստ տուող սկառուը, ամէնէն առաջ կը նետուէր գործի մէջ:

Ահա քեզի օրինակ մը որմէ կրնաս դաս մը հանել: Կան տակաւին շատ մը բաներ որոնք եթէ դու չի կրնաս խորհիլ դիմէ խմբապետիդ, խորհուրդ հարցուր անոր որ քեզի շատ սիրով պիտի պատասխանէ եւ պիտի օգնէ:





### ԿԱՐՏԱՆԻ ՀԱՆԳԷՍԸ

### Մէջտեղը նստողն է Պալաքեան Սրբազան

ցած կը դիտէր մեզ, առաջին Մանգամն էր որ կը տեսնէին հայ սկաուտներու այսքան հոծ խումբ մը:

Բանակավայր հասնելով անմիջապէս կը սկսինք գործի, վրանները լարել, գոյքերը տեղաւորել: Տղաքը մեզուներու պէս կ'աշխատէին ժամ առաջ կարգի դնելու բանակավայրը, գայլիկներու եռանդը տեսնելու արժանի էր: Ամէն ինչ պատրաստ է և ահա կը ծածանին հայ և ֆրանսական դրօշները:

Որոշուած էր նոյն գիշեր կատարել բանակումի կրակը, ժողովուրդին յայտարարուած էր այս որոշումը, բոլորը կը գոցեն խանութները և սրճարանները, նոյնիսկ իտալացիներ և բոլոնիացիներ և կուզան համախմբուիլ մեր շուրջ, ամէնուն համար նորութիւն էր այս տեսարանը:

Տեսարանը հին հեթանոսական տօնի մը երեւոյթը առած էր կարծես: Գոյնզգոյն լապտերները կը պլպլային: Ժողովուրդը անհամբեր կ'սպասէր հանդիսութեանց: Մութը կ'իջնէր, կրակի ժամը կը մօտենար: Բոլորս կրակին երզը սուլելով

և հնդկական շարք ու դնացքով կը շըրջապատենք փայտերու դէզը, կրակը վառելու պատիւը Առաջնորդ Գեղամ Պօղոսեանին էր, կ'սկսի փայտերու ճարճատիւնը որուն կը յաջորդէ հրաշալի բոցը: Ժամը ճիշտ 9ին սկսաւ հանդէսը, առաջին առթիւ սկաուտ առաջնորդներէն Երևանդ Օհանեանի առաջնորդութեամբ երգուեցաւ Մարսէլլէզը, բոլոր սկաուտները եւ ժողովուրդը ոտքի կանգնեցան ունկնդրելու համար: Մարսէլլէզէն վերջ երգուեցաւ Մեր Հայրենիքը և Յառաջ Նահատակը եռաձայն, որոնք խոր տպաւորութիւն ձգեցին ներկաներուն վրայ: Յետոյ սկաուտ վարիչ Պերճ Ֆէրհատեան մանրամասն բացատրեց բանակումի կըրակին ծագումը եւ անոր նշանակութիւնը:

Հետզհետէ տեղի ունեցան երգեր ու արտասանութիւններ զուարճութիւններ սկաուտներու կողմէ: Գնահատութեան արժանի էր մեր երէց սկաուտներէն Գ. Պօղոսեան մշեցիին զուարճախօսութիւնները և կատակները որոնք ժողովուրդին ծափերուն արժանացան, նաև Ա. Գրիգորեան



Գ. Պօղոսեան մեր երկու սկաուտներուն ուսական քօղաքներուն պարը: Այս բոլորը տեղեցին մինչև ժամը 12 որմէ վերջ Ծէրհատեան վարդապետ հակիրճ խօսքերով գնահատեց սկաուտները և շնորհաւորեց իրենց վարիչը որ այսքան կարճ ժամանակամիջոցի մէջ կրցած էր լաւագոյն արդիւնք մը ձեռք բերել: Այս բոլորէն վերջ, խումբին վարիչ Պերճ Ծէրհատեան շնորհակալութիւն յայտնեց սկաուտներու կողմէ ներկաներուն ու հազորդեց թէ բանակումի կրակը ու հանդիսութիւնները աւարտած են այսօրուան համար: Ամէնէն վերջ բոլոր սկաուտները ձեռք ձեռքի երգեցին տէրունական աղօթքը ու հըրածեալտի սկաուտական երգը: Այս բոլորը խոր տպաւորութիւն թողուցին ներկաններուն վրայ: Հիմա ամէն կողմ խոր լռութիւն կը տիրէ, սկաուտները և գայլիկները քաշուած են իրենց վրաններուն տակ, մտածելով կիրակիի հանդէսին վրայ:

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏ.— Զարթնումի փողը հնչելուն սկաուտները և գայլիկները դուրս կ'ելնեն վրաններէն, օրուան բանակումի առաջնորդ նշանակուած էր վարիչ-առաջնորդ Պերճ Ծէրհատեանը: Օրուան ժամանակացոյցին համաձայն կ'սկսի կեանքը: Մաքրութիւն վրաններու և բանակավայրի, ամէն ինչ վրաններէն դուրս, շուետական մարզանք ընդհանուր սկաուտներու, անձնական մաքրութիւն, յարզանք դրօշին: Դրօշի յարզանքի պահը իսկապէս տպաւորիչ էր, խմբակները խիստ մաքուր հազուած, կայմին շուրջ կ'սպասեն անշարժ, բանակումի պետին լուրջ և կտրուկ Պատուի՛ Առ, հրամանին վրայ ամէնքը մէկ շարժումով, յարզանքի կը կենան, լուռ են բոլորը, մինչև սկաուտական դրօշին ծալքերը բացուելով կայմին գազաթը հասնիլը: Սոյն արարողութենէն վերջ կ'իջնենք եկեղեցի: Ժամը 8էն մինչև 11 տեղի ունեցաւ Պատարագի տրարողութիւնը, Տ. Յով. Վրդ. Ծէրհատեանն էր պատարագիչը որուն կ'ընկերակցէին ըսկաուտներէ բազկացած դպրաց դաս մը, նոյն օրը քարոզեց նաև Պալաքեան

Սրբազան և շեշտեց Հ. Մ. Ը. Մ.ի կարեւորութիւնը ազգային կեանքին մէջ, ծանրանալով սկաուտութեան վրայ ըսաւ, «Եթէ կուզէք որ ձեր գաւակները ապահովէք հիւանդութիւններու դէմ և մանաւանդ թոքախտի դէմ՝ յանձնեցէք գանոնք Հ. Մ. Ը. Մ.ի սկաուտական շարքերուն, խտացուցէք այդ շարքերը, անոր դուռը բաց է բոլորին համար, առանց խըտութեան»

Եկեղեցիէն վերջ կրկին վերադարձանք բանակատեղի կէսօրուան ճաշի համար:

Խոհարարները կաթսաներուն կրակը կ'արծարծէին կերակուրը հասցնելու համար ժամանակին, օջախներուն առջև իրարու հետ մրցելով, թէ որը ճիշտ պահանջուած ժամուն և համեղ պիտի պատրաստէ ճաշը, երբ ճաշի փողը հընջեց աղաքը խուժեցին դէպի վրանները իրենց գոյքերը բերելու:

Կ'արժէ յիշել հոս Տէր և Տիկին Եկաւեաններու բերած աջակցութիւնը մեր սկաուտներուն, ճոխ ճաշասեղան մը պատրաստած էին սկաուտներու բանակումին մօտ, սեղանին կը նախագահէր Պալաքեան Արքայանը իր շուրջը առած սկաուտական վարիչները և սկաուտական յանձնախումբի անդամները, հաճելի անցաւ ճաշը: Ժամը երեքին հանդէսը սկսաւ Դաշնակցութեան զլիւպին մէջ: Տողանցքին առջեւէն Հ. Մ. Ը. Մ.ի ըսկաուտական դրօշը կը տանէին երէց սկաուտները, որուն կը հետևէին սկաուտներու երեք խմբակներ իսկ ամէնէն վերջը կուզային գայլիկներու երեք հոլերը ղեկավարութեամբ վարիչ Պերճ Ծերհատեանի:

Բացման խօսքը ըրաւ Սկաուտ. Յանձնախումբի անդամներէն Պ. Մկրտիչ Փափագեան որ խօսեցաւ հետեւեալը.—

«Երկու խօսքով պիտի բացատրեմ Հ. Մ. Ը. Մ.ի նպատակը որ է Հայը միշտ հայ պահել ուր որ ալ ըլլայ ան, ուր հայ կայ հոն Հ. Մ. Ը. Մ. գոյութիւն ունի: Ահա այսօր ձեզի ցոյց կուտանք մէկ փոքր մասը այդ միութեան հոգ չէ թէ փոքր, վաղը կը մեծնայ ինչպէս անձրեւի կաթիլ»



ներսերը ծովեր կը դառնան և աւազի հատերը լեռներ կը կազմեն:

«Հ. Մ. Լ. Մ.ը շատ մեծ դեր կը կատարէ հայ իրականութեան մէջ, ան կը հերկէ, կը պարարտացնէ հողը, պատրաստելու համար ապագայ հայ քաղաքացին: Անոր դուռը բաց է ամէնուն համար, 7 տարեկանէն մինչև 70ը, բոլորին համար գործ կայ հոն:

«Մեր նպատակն է պայքարիլ ուղղակի ճերմակ ջարդին՝ այսինքն այլասերման եւ օտարացման դէմ:

«Հ. Մ. Լ. Մ.ի նպատակն է մանչկամ աղջիկ, պզտիկ տարիքէն հեռու պահել քաղաքի վտանգաւոր միջնորդութեան և պարտահաներէն որոնք կը հիւժեն և կը մաշեցնեն մեր պատանիները, որ կը ըստ պատճառ գոյութեանը մայր հողէն հեռու մնացած հայութեան. ուրեմն հայկենակիցներ հայրեր եւ մայրեր մի խնայէք ձեր բարոյակական եւ նիւթական աջակցութիւնը այս կազմակերպութեան: Յանձնեցէք ձեր զաւակերը եթէ կուզէք որ անոնք ըլլան տոկուն եւ ազնիւ և ուղղամիտ մարդեր, մէկ խօսքով ապագայ լաւ սերունդ մը, վաղուան հայ քաղաքացիներ:»

Սոյն գեղեցիկ խօսքերէն վերջ յիսուն սկաուտներ եւ զայլիկներ հայկական և սկաուական դրօշներով դէպի սրահ յառաջացան մարզական քայլերգով որոնց կ'ընկերակցէր Յովհաննէս Փափազեան Ֆիլիթով. այդ պահը յուզիչ եւ ողբերօրիչ էր, այնպէս որ սրահին մէջ յուզումէն լացողներ կային: Սոյն յիսուն պատանիները բեմին վրայ, իւղաներկ գծուած Արարատի նկարին առջեւ վարիչին տըւած մէկ հրամանին վրայ կարգի կեցան: Հանդէսին գեղարուեստական մասը բաւական ճոխ էր եւ կոկիկ: Ներկայացուեցաւ սկաուտական կտոր մը, կենդանի պատկերներ, արտասանութիւն, կատակերգութիւն մը ոռւս եւ հայ գիւղական կեանքէ, ամէնէն վերջ կատարուեցաւ Հափական եւ շուէտական մարզանքներ, բուրգեր, կենդանի պատկեր, բոլորն ալ պատրաստուած Պերճ Թէրհատեանի կողմէ: Մէջ ընդ մէջ Ֆիլիթով կը նուագէր

Յովհ. Փափազեան: Հանդէսին փակման խօսքը տրուած էր Պալաքեան Սրբազանին որ շնորհաւորելէ վերջ վարիչները, շատ յստակ և խտացած ձևով ներկայացուց միութեան նպատակն ու կեանքը, ծանրանալով սկաուտութեան վրայ ըսաւ, «Եթէ կուզէք որ ձեր զաւակները փողոցները թափառելէ դազրին, պարասրահներու մէջ չի հիւժին. խաղամոլութեան ցանցին մէջ չի յնան եւ մանաւանդ թոքախտէ զերծ մնան, յանձնեցէք զանոնք Հ. Մ. Հ. Մ.ի սկաուտական շարքերուն, խտացուցէք այդ շարքերը» Զարմանք յայտնեց որ այսքան կարճ ժամանակամիջոցի մէջ կրցած են այս գեղեցիկ եւ ոսկի նշանաբանին շուրջ հաւաքել ու կազմակերպել այս անուշիկ ու կորովի պատանիները:

«Այսօր աշխարհի ամէն կողմ Հ. Մ. Լ. Մ.ի ճիւղերը ունի, հոս կը ներկայացնէ կազմակերպութեան Մարտէյլի մէկ փոքրիկ պատկերը: Հոս ունինք 50 սկաուտներ և գործօն անդամներ 270 հողիէ բաղկացած, որոնք իրենց նիւթական և բարոյականան օժանդակութիւնը կը բերեն այս միութեան»:

Հանդէսին վերջաւորութեանը Սրբազանին ներկայութեան վարիչ-առաջնորդի աստիճան տրուեցաւ Վահան Թէսճեանի, փոխ-առաջնորդի աստիճան՝ Գեղամ Պօղոսեանի և Երուանդ Օհանեսանի, եւ զայլիկներէն Անդրանիկ Յակոբեանի, Աշոտ Վարդանեսանի եւ Պօղոսիկ Եկաւեանի՝ փոխ-վեցեակապետի աստիճան տրուեցաւ:

Հանդէսը փակուեցաւ բուն ծափերով եւ ողբերգութիւնով, բոլորն ալ գոհ էին այդ օրը տեսնելով հայրերիներու շարժումը և շատերին քնաբերաբար կուզէին իրենց զաւակները յանձնել Հ. Մ. Լ. Մ.ի սկաուտական շարքերուն:

Ժողովուրդը ցրուեցաւ լաւ օր մը ապրած ըլլալով եւ յաջորդ անգամին եւս վայելելու փափագով:

Ժամը 6.30ին բանակատեղին մէջ տեղի ունեցաւ «Յարգանք Դրօշին» որ ներկայ ժողովուրդին վրայ մեծ տպաւորութիւն թողուց: Բանակումը եւ հանդէսը վերջա-



ՍԿԱՌՈՒՏՈՒՇԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔ

ՅԻՐԱՆՍԱ

### ՍԿԱՌՈՒՏՈՒՇԻՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՎԷՐՎԻԼԻ ՄԷՋ

Հինգշաբթի առաւօտ. — Սաստիկ անձրեւ, խմբապետուհին նամակներ կը ստանայ ծնողներէն, ըսելով որ օդին պատճառաւ չեն ուզեր որ իրենց զաւակները բանակում ընեն: Յաւալի բան...

Գոլումպէն պզտիկ սկաուտուհի մը կը քաշուի իր սենեակը, կ'աղօթէ մինչեւ որ արեւը կ'սկսի փայլիլ...

Ուրբաթ առաւօտ. — Օդը շատ գեղեցիկ է, Փարիզի Կառ տիւ Նօրի բազմութեան մէջ կը նշմարենք Անկիէնի, Ռոնիի և Գոլումպի ժպտուն աղջիկները որ կը փութան դէպի որոշուած տեղը:

Ճամբորդութիւնը հաճելի է և տեսարանը գեղեցիկ:

Ահա՛ վէրվիլը, ամէնքը այս բառը հոլոված են քանի օրերէ ի վեր:

Servajean ընտանիքը, որուն կալուածին մէջ պիտի ընենք բանակումը, եկած է կայարան դիմաւորելու. մեզ կ'առաջնորդէ գեղեցիկ վայր մը պուրակներով շրջապատուած, Ուազ գետը կ'անցնի քիչ մը հեռուէն:

Շատ յուզիչ և զարմանալի է տեսնել որ ինչպէս մեր պզտիկ սկաուտուհիներն այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ կրցած են ըմբռնել սկաուտութեան ոգին:

ցան «Ը՛գ,գ,գ,գ, պում հա՛ կեցցէ՛ չ. Մ. Ը. Մ.» բացազանչութիւնով որուն արձագանգը կը կրկնուէր հեռու անտառին խորքէն:

Կսկիծով կը թողունք երկու օրուան մեր կազդուրիչ կեանքը Սրբազանին ընկերակցութեամբ եւ երգելով կը վերադառնանք Մարսէյ:

Մարսէյ և ԱՆԳՐԱՆԻԿ ԱՅԱՆԵԱՆ

Բանակավայրը հազիւ հասած, բոլորս համերաշխօրէն կը սկսինք մեր մեծերուն պէս աշխատիլ, կորովի «արծիւները» կը ցուցնեն իրենց ուժը, «մեղուները» կուզան կ'երթան ժրաջան, բերելով փայտ, ջուր եւայլն, զուարթ «արտոյա»ներն ալ իրենց աջակցութիւնը կը բերէին, նոյնպէս «պզտիկ վառեակ»ը, բանակումի պէսլէն ալ կ'աշխատի բոլորին հետ:

Քիչ ատենէն վրանները կը կանգնին, ֆրանսական և հայկական եռագոյնները կը տիրապետեն բանակատեղիին վրայ:

Անձրեւը կը սկսի: Պէ՛տք է որ անպայման բան մը կենայ ուրախութիւնը խանգարելու...: Բայց հայ սկաուտուհին միշտ զուարթ և խանդավառ է. ճաշարան վրանին տակ հաւաքուած լաւ ժամանակ մը կ'անցնենք:

Շաբաթ առաւօտ. — Չարթնումի փողը հնչելուն սկաուտուհիները ղուրս կ'ելլեն վրանէն՝ երգելով խմբովին:

Նոյն օրը կ'այցելենք Իլ-Ստան. թերեւս առաջին անգամ ըլլալով այս անտառներուն մէջ հայ երգը կ'արձագանգէ...:

Ժամը ինն է, բանակումի խարոյկ, պատույ տեղը տրամադրուած է ֆրանսացի ընտանիքին: Տարօրինա՛կ, փայտերը չեն ուզեր բռնկիլ, կը փչենք երկար: Յանկարճ կարմիր բոցը կ'ելլէ և կը ծաւալի...:

Բացումը կը կատարուի «Մեր Հայրենիք»ով, որուն կը յաջորդեն, «Entendez-vous dans le feu...» և «Écoutez Scouts»: Տեղի կ'ունենան նաեւ հայկական պարեր, զուարճալի խաղեր եւայլն.

Օր. S. Servajean եւ Պ. H. Servajean կը ներկայացնեն La Soeur du Couvent և Ke-ke-ke-kety...

Տիկին Servajean, «Միջազգային Կրտսեր Ուսանող Սկաուտներ»ու խմբապետուհին և մեր խմբապետուհիները կ'երգեն «Ah, qu'il fait bon se comprendre et s'aimer...»

Չուարճութեան մասը վերջացած է. հանգիստի պահն է:

Օր. S. Ընքապապեան հայ սկաուտներու Ընդհ. խմբապետուհին, հետեւեալ





Սկառուտուհիներու բանակումը վերվիլի մէջ

ուզերձը կ'ընէ իր սիրելի պատիկներուն:

«Մեծ հրճուանքով մըն է, որ կուգամ ըսել թէ այսօր առաջին անգամ ըլլալով, մեր քոյրերէն երկուքը բոլորիդ ներկայութեան պիտի խոստանան ծառայել Աստուծոյ, հայրենիքին, ընտանիքին եւ օգնել միշտ ուրիշին, մնալով հաւատարիմ հայ սկառուտական դաւանանքին:

«Պահ մը առաջ երբ կը խորհէի օրուան եղելութեանց և կը դիտէի հեռուէն խոստումի պատրաստուողները, ինձ այնպէս կը թուէր որ անոնք խորհրդաւոր պահու մը կը կը պատրաստուէին: Գտնուած եմ միեւնոյն պարագային մէջ, ուստի թոյլ տուէք ինձի ըսել:

«Քոյր թէպէտեւ պատիկ ես և տկար և խոստումը՝ որուն կը պատրաստուիս չես գիտեր պիտի կրնա՞ս լիուլի կատարել կեանքիդ մէջ, բայց հող չէ, եկուր և խոստացիր ինչպէս որ կը հասկնաս կարելին ընել ծառայելու համար Աստուծոյ, հայրենիքիդ, ընտանիքիդ, օգնել միշտ ուրիշին և մնալ հաւատարիմ դաւանանքիդ:

«Կ'ըսեմ կարելիդ ընել, որովհետեւ սուրբ մը չես և չես կրնար հաստատօրէն խոստանալ, երբէք չի ստել, խաբուիլ կամ խաբել, այլ կը խոստանաս բոլոր ուժերդ ի գործ դնել, չի տկարանալու համար ամենադժուարին վայրկեաններու մէջ:

«Խոստումը ուրիշ բան չէ, այլ ուժ

մը որ դուն այս օրուրնէ սկսեալ կը դնես մէջդ, ուժ մը որ քու առաջնորդդ պիտի դառնայ կեանքի ճամբորդութեանդ մէջ և անբաժան ընկերդ մինչեւ քու ծերութեան օրերը:

«Այո՛ խոստումը ուժ մըն է: Ան գիշերուրնէ սկսեալ ինքզինքդ շատ աւելի գորաւոր պիտի զգաս և երբ կեանքի պայքարին մէջ գտնուիս դժուարին պարագաներու առջեւ, ահամայ ուղղուիս դէպի սխալ ճամբան՝ յանկարծ պիտի յիշես այս գիշերուան պատկերը, նախ պիտի զգաս ինքզինքդ քոյրերուդ առջեւ, յետոյ պիտի տեսնաս կրակը, և վերջապէս տկար աղջնակը որ կը ներկայացնես այս գիշեր և որ երեք մասները երկընցուցած դողդոջուն կը յառաջանայ դէպի խորհրդաւոր կրակը, խոստումը կատարելու համար: Վստահ եմ որ նոյն վայրկեանին ետ պիտի դառնաս սխալ ճամբէն:

«Այս բանակումի ուրախութիւնը միշտ չպիտի տեսէ որովհետեւ կեանքը ելեւէջներ ունի, երբեմն պիտի ունենաս քու տրտմութիւններդ, վիշտերդ և յետոյ ընտանիքիդ և դաւակներուդ բեռը և օր մը յանկարծ յուսահատած կամ զայրացած ըսես թերեւս «ինչի՞ կը ծառայէ այս բոլորը, ի՞նչ է կեանքը»:

«Բայց կրկին այս գիշերուան կեանքդ



լուսաւոր պատկերի մը նման պիտի  
զծուի քու առջեւդ, և այդ պահուն իսկ  
սթափելով պիտի ըսես. «այս՛ նախատե-  
սած էի ասոնք, պիտի պատահէին, պիտի  
մնամ համեստ սկաւառուսին և վառ պիտի  
պահեմ իմ մէջս սկաւառական ոգին օրի-  
նակ դառնալու համար իմ գաւակներուս»:

«Քանի որ ամենուս առջեւ կը խոստա-  
նաս, պէտք է որ մինչեւ վերջ պահես  
խոստումդ իբր բարձր նկարագրի մարդ:

«Միեւնոյն խոստումը շատ անգամներ  
կրկնուած է ուրիշներու կողմէ քենէ  
առաջ, և պիտի կրկնուի այսուհետեւ:  
Քու յօժար կամքովդ է որ եկար մեր ըն-  
տանիքին մէջ, մեզ տեսար, ուսումնասի-  
րեցիր մեր դաւանանքը և մեր իտէալ-  
ները, հիմայ քեզմէ կըստատուի ըլլալ  
պարկեշտ, ճարպիկ, բարի, խնդումբերես,  
օգնող ու պարտաճանաչ ազջնակ մը:

«Նաեւ զիտե՛ս ի՛նչ պիտի սպասուի  
քենէ ապագային մէջ:

«Առաքինի, ուժով, համեստ, բարի հայ  
մայր մը որ պիտի աշխատի բարոյապէս  
իբ հայրենիքին վերականգնումին համար:

«Քո՛յր, խորհէ պահ մը այս ամէնուն  
վրայ: »

Յետոյ տեսնուեցաւ կուսական ձեռ-  
քերու յառաջանալը զէպի կրակը՝ իբր  
խոստում...:

Տիկին Servajean խօսք անելով  
ըսաւ.

«Շատ երջանիկ եմ որ Ձեր առաջին  
բանակումը իմ կալուածիս մէջ տեղի  
կ'ունենայ, կը մտածեմ որ հիմայ դուք  
ըստորդ իմ պղտիկ քոյրերս էք: Սիրելի  
խմբապետուհիներ, զիտեմ որ շատ կը  
յոգնիք, սակայն մի յուսահատիք, այ-  
սօրուան կրակը ձեր խորհրդանիշը թող  
ըլլայ, ան՝ դժուարութիւնով բռնկեցաւ,  
այս՛, շատ դժուարութիւնով, սակայն երբ  
բռնկեցաւ՝ ան գարգացաւ և փայլեցաւ»:

Հիմա, ամէն կողմ խոր լռութիւնը կը  
տիրէ, սկաւառուսիները քաշուած են  
երենց վօսաններուն տակ, մտածելով սի-  
րելի խմբապետուհիին խօսքերուն վրայ:

Կիրակի, հաճելի ժամանակ մը անցը-  
նելէ վերջ պտղատու ծառերով պուրակի  
մը մէջ, սկաւառուսիներու պղտիկ խում-

ՎԱՐՉԱԿԱՆ

Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի ՇըՋ. Վար-  
չութիւնը, Տօքթ. Նանսէնի մահուան առ-  
թիւ հետեւեալը հեռագրեց Տիկ. Նանսէ-  
նին.—

«Կը խոնարհինք խորունկ ցաւով մը,  
երախտազէտ հայ ժողովուրդի հերոսա-  
կան պաշտպանին զազաղին առջեւը:»

Սոյն հեռագրին հետեւեալ պատաս-  
խանը գրեց ի Յարգելի Տիկինը.—

«Խիստ զգածուած եմ Ձեր ցաւակ-  
ցական արտայայտութենէն որ հեռագր-  
րած էիք հէք ամուսինիս մահուան առ-  
թիւ:

«Անկեղծօրէն շնորհակալ եմ Ձեր  
այս համակրական արտայայտութեան  
համար: Ընդունեցէք լաւագոյն զգացում-  
ներուս արտայայտութիւնը:

Sigrun Nansen

Ճ Շ Դ Ո Ի Մ

Հայ Սկաւառուսի նախորդ թիւին մէջ  
կարգապի լուր մը ուր իմ մասիս կար թէ  
Պ. Պ. Լոռէնեանի և Վ. Հարիկեանի հետ,  
Ֆրանսական ֆութպօլի ֆէտէրասիօնին  
arbitre officiel նշանակուած ենք:

Ես արդէն 1925էն Մարտէյլ և 1928էն  
ի վեր Փարիզի L. P. F. A. ի պատուոյ  
զասակարգի arbitre officiel եղած եմ,  
իսկ ներկայիս կարգուած եմ, Լիլի դա-  
տաւորներուն մարմնակրթմանքի զասա-  
խօս. Պ. Լոռէնեան պարզ դատաւոր է  
եակրորդ զասակարգի խումբերուն. պաշ-  
տօնական յայտարարութեան մէջ միայն  
վեց հոգիի անուն տեսանք որոնք ստա-  
ցած են arbitre officielի վկայական,  
որոնց շարքին մենք չի տեսանք Պ. Հա-  
րիկեանի անունը:

Կը խնդրուի սոյն ճշտումը գնել թեր-  
թիղ մէջ:

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

Ըր, դո՛ս և զուարթ կը յառաջանայ զէպի  
կայարան և շնորհակալութեան հուռոս-  
ներով կը բաժնուինք այս ազնիւ և հիւրա-  
սէր ընտանիքէն՝ վերադառնալով Փարիզ,  
լաւագոյն յիշատակներով:

ՄՇՏԱԺՊԻՏ



Հ. Մ. Ը. Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

### ԲԱՆԱԿՈՒՄ - ՕԴԱՓՈՒՈՒԹԻՒՆ

3 ՕԳՈՍՏՈՍ - 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1930,

ՍՏԵԼԼԱ-ՓԼԱԺ

#### Բ. ՏՍՐԵՇՐԶԱՆ

Հ. Մ. Ը. Մ.ի Փարիզի Շրջանային Վարչութիւնը, այս տարի եւս կազմակերպեց Մանչի եղերքը, Ստելլա-Փլաժի մէջ, սկառտական «Բանակում-օգափոխութիւն» մը, արձակուրդի շրջանին: Անցած տարուան ձեռնարկը, զոհացուցիչ արդիւնք տուած էր թէ առողջապահական և թէ դաստիարակչական տեսակէտով, այս տարի աւելի փորձառու և լաւ կազմակերպուած դուրս եկաւ այս գործը:



Ստելլա-Փլաժի բանակավայրը

Սոյն օգափոխութենէն կ'օգտուէին ոչ միայն սկառտները այլ և դուրսէն պատանիներ՝ որոնք պէտք ունէին կազդուումի: Հ. Մ. Ը. Մ.ը ըլլալով միեւնոյն ատեն հայ պատանիներու առողջութեան նախանձախնդիր և ցեղին Ֆիզիքական գոյութեան պահակը, չէր կրնար խտրութիւն դնել ոչ-սկառտ պատանիներու հանդէպ, ուրեմն մամուլի միջոցաւ կոչ ուղղեց բոլորին որ օգտուին այս գեղեցիկ ձեռնարկէն: Ուրախ ենք բսելու որ շատ մը ծնողներ իրենց պարտականութեան

գիտակցութիւնը ունեցան, իրենց զաւակները յանձնելու մեզի, փոխարէն համեստ զումարի մը, — 350 ֆր, ամսական — որմէ մեծ չափով օգտուեցան տղաքը, թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս:

Բանակումի առաջին օրերը, օգերը շատ նպաստաւոր չ'եղան մեր տղոց համար, սակայն վարիչներուն աջալրջութիւնը մեծապէս դարմանեց բնութեան պակասը:

Վարչութիւնը որոշ ծրագիր մը մը շահեց այս առթիւ և անոր զործագրութիւնը յանձնեց սկառտ-խմբապետ Պ. Հայկազն Արէլեանի, բանակում-օգափոխութեան ընդհանուր հսկիչ և պատասխանատու նշանակելով զինք: Պ. Արէլեան, իր միջանի ընկերներով և աշխատանքի բաժանումով, լաւ կերպով տարաւ գործը, որմէ թէ Վարչութիւնը և թէ ծնողները խիստ զոհ մնացին:

Կերակուրները խիստ լաւ և առատ էին, նոյնպէս պտուղը, տղաքը այնքան զոհ էին իրենց կեանքէն: Բանակումի միջոցին, կարգ մը ծնողներ, միջանի օրուան համար այցելեցին Ստելլա-Փլաժ մօտէն տեսնելու համար հոն տեղի կեանքը, այդ ծնողները կը փափաքէին որ իրենց զաւակները միասին ճաշեն օթէլ՝ իրենց հետ, սակայն տղաքը դժկամակեցան այդ բանին դէմ, չուզելով զրկուիլ իրենց հաճոյալի կեանքէն:

Բանակումի միջոցին, տղաքը, ոչ միայն մաքուր օդ և լաւ անունդ ստացան, այլ և կրթական տեսակէտով ալ օգտուեցան: Հոն, ամէն օր, առտուան դրօշի պարզումէն և վրաններու մաքրութենէն վերջ, հայ լեզուի և հայոց պատմութեան դասերու կը հետեւէին անոնք, այս կերպով, շատեր, որոնք հայերէն չէին գիտեր, ձեռք բերին զոնէ տարրական ծանօթութիւն իրենց մայրենի լեզուին մէջ, հայերէն նամակներ կը գրէին ի մեծ ուրախութեան իրենց ծնողքին: Ամէն առաւօտ շուէտական և չափական մարզանքի պահը ունէին: Նոյնպէս լաւ կերպով օգտագործուեցան անոնք սկառտական դաստիարակութեան տեսակէտէն: Խմբապետ Պ. Ժիրայր Մինթանճեան,





Մեր սկաուտները Անգլիոյ մէջ

մասնագիտօրէն դրադեցաւ տղոց հետ, հետախուզական և ուրիշ սկաուտական մասնագիտական դասեր աւանդելով գործնական կերպով: Ա. և Բ. կարգի ու նորրնձայի քննութիւններ անցուցին շատեր, իսկ Երէցներն ալ իրենց երզումը կատարեցին հոն:

Շաբաթը երկու օր, գիշերները «կրակի շուրջ» տեղի կ'ունենար ուր համեղ պատմուածքներ և երգեր տեղի կ'ունենային:

Երբ՝ օգերը նպաստաւոր եղան, ծովու լողանքներ տեղի կ'ունենային վարիչին հակողութեան տակ և այս պատճառով ոչ մէկ վտանգ տեղի ունեցաւ, տղաքը լիութի օգտուեցան թէ օգէն և թէ ծովէն:

Վերջին շաբաթն էր, պէտք էր հանդիսաւոր կերպով փակել միամտեայ այս գեղեցիկ կեանքին էջը, ուրեմն որոշուեցաւ վերջին ուրբաթ գիշեր կրակի հանդէս մը կատարել: Բաւական լաւ պատրաստուած էր ծրագիրը, բոլոր շրջանին մէջ ազդեր փակցուած էին այդ առթիւ: Նոյն գիշեր տեղին սինէման և պարասրահը գոց էր ի պատիւ մեր սկաուտներու հանդէսին որով, բոլոր ժողովուրդը, Ֆրանսացի և գանազան ազգեր, հաւաքուած էին հայ սկաուտներու բանակավայրը՝ կրակի

բացօղեայ մեհեանին շուրջ: Փառաւոր խարոյկ մը պատրաստած էին սկաուտները որուն շուրջ խուռն բազմութիւն մը սգեւորուած կը դիտէր այս գեղեցիկ արարողութիւնը: Տեղի ունեցան երգեր, պարեր, արտասանութիւն և սկաուտական խաղեր: Գիշերը ուշ ատեն ցրուեցաւ բազմութիւնը այս գեղեցիկ հանդէսէն, լաւազոյն յիշատակներ տանելով:

Օգտուելով այս առիթէն, մանաւանդ մօտիկութեան պարագայէն սկաուտական խումբ մը, իրենց խմբապետով, փոքր պտոյտ մը ըրին դէպի Անգլիա՝ Ֆրանսական սկաուտական խմբակի մը հետ:

Կիրակի գիշեր վերադարձան Փարիզ կազդուրուած թէ Ֆիզիքապէս և հոգեպէս, լաւազոյն կերպով տանելու համար իրենց առօրեայ աշխատանքը:

Այս առթիւ շնորհակալութեամբ յիշենք որ Հայ Տիկնանց Կարմիր Սաչի կազմակերպութիւնը ինչպէս անցած տարի, այս տարի եւս սիրով տրամադրեց երկու հազար ֆրանքի գումար մը, վճարելու անկարող տղոց օգափոխութեան ծախքին համար: Սոյն գումարէն օգտուեցան քսան պատանիներ:

ՏԵՂԵԿԱՍՈՒ



### «ԲԱՐՁՐԱՑԻՐ ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»

(Աւփօրվիլի երգման հանդէսին առեփիւ)

Օրեր են անցել այն երեկոյթէն, որ Աւփօրվիլում տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղի երգման արարողութեան հանդէսը: Օրեր են անցել, սակայն ես չեմ ազատուել այն տպաւորութենէն, որ ստացել եմ այդ երեկոյթէն: Ուզում եմ ապրումներիս մասնակից անել իրանց իսկ, ուխտաւ պատանիներին, որոնք չը մտածեցին անշուշտ, թէ ինչ տուին հանդիսականներին:

Շարաթ օր էր. աննպաստ օդ. ամբողջ օրը հեղեղանման անձրեւ էր տեղում. գիտէի, որ հանդէսը՝ բանակի կրակի շուրջ՝ բացօթեայ տեղի պիտի ունենար. ու կասկածեցայ, թէ նման օդին հանդէս տեղի ունենայ:

Ու սակայն, ամաչեցի իմ կասկածիս համար, երբ տեսայ, որ դեռ երեկոյ չեղած, հեղեղանման անձրեւին անտարբեր, Փարիզէն Աւփօրվիլ են գալիս զոյգ անխոնջ խմբապետները՝ Ժիրայր Մինթանճեան եւ Հայկ Մերկերեան: Կասկածել Հ. Մ. Ը. Մ.ի առնելիք քայլերին կը նշանակէ լաւ չճանաչել նրանց կուռ կամքը եւ ճշտապահութիւնը: Նրանք քայլում էին արագ եւ չափով. նրանք հաւատում էին իրենց գործին եւ անսովոր անձրեւը չէին նկատում:

Երեկոյ է. շտապում եմ հանդէսի վայրը՝ եկեղեցի. յանցաւոր եմ նորէն. ուշացել եմ: Ամայի է եկեղեցու գաւիթը եւ այնպէս անլոյս նրա պատուհանները: Կրկին վարանում՝ ժողովուրդ չկայ երևի ու տղերքն առանձին են, լուռ: Զգուշութեամբ բաց եմ անում եկեղեցու ծանր դուռը. ու յանկարծ . . . Ինձ թւում է, որ ես ոչ թէ հանդէսի վայր եմ մտնում, այլ խաւարումի. սուգի զիշեր է: Դասէն դուրս՝ մի սեղանի վրայ վառում են տասներկու մոմեր, ու իրենց ազօտ լոյսով ստուերում են պահում սրահը եւ լուռ ժողովուրդը: Մոմերի յետեւում նըստած են երեք չորս հոգի՝ օրուայ նախա-

զահութիւնը: Մոմերի դալուկ լոյսով նըբանց դէմքերը գունատ են երևում, ու ստուերներով սեւամած՝ տանջուած, տառապած, թախծոտ . . . Գողգոթայ բարձրացած, խաչուած հայ ժողովուրդի դէմքն կարծես, որի աչքերուն լոյս է խորասուզուել, ու աշխարհը ստուերին մէջն է մնացել:

Խմբապետը՝ Ժիրայր, ասել վերջացրել է իր բացման խօսքը. տեղի ունենում է երգման արարողութիւնը . . .

Ժողովուրդը լուռ. ինչպէս սուգի զիշերը Ասետարանի պատգամն է լաւում. այնպէս էլ խորասոյգ՝ երգման խօսքն է ունկնդրում: Ու երգման համար վեր բարձրացած ձեռները հաստատ են, աներեր, յւ շրթունքներէն դուրս հոսող բառերը սրտէն են, համոզումով հաւատքով:

— Երգում եմ հայրենիքիս եռագոյն դրօշին վրայ. ծառայել հաւատարմօրէն ազգիս, հայրենիքիս, եկեղեցուս, բարուն, զեղեցիկին . . .

Զգիտեմ նրանց էի լսում, թէ ես էլ սրտիս մէջ նոյն երգումն էի կատարում:

Ու Յետոյ . . . «Բարձրացիր—Բարձրացուր»: Ու թւաց ինձ տեսնել իմ ազգը հայրենագուրկ, դաժան կեանքի պայքարին անդէն մատնուած՝ արատներու ովկիանում տարուբեր, գալարուն: Ու ովկիանի կեղբոնում դէպի վե՛ր դէպի լոյս կարկառուն մի անսասան սիւն, որ ձգում դէպ իրեն արատների ծովում լողացող իմ եղբայրներին, իմ քոյրերին, որոնք իրար կառչած, իրար բռնած բարձրանում են սիւնն ի վեր, դէպի վե՛ր, դէպի կապո՛յտը դէպի լո՛յսը. բարձրանում են բարձրանում . . . Ու որքան վեր են բարձրանում նրանք, այնքան մաքրւում են. այնքան լուսաւորում, որ դառնում են մի հսկայ փարոս եւ լուսաւորում են մեր կեանքը համակ:

Եղբա՛յր իմ, եղբա՛յր իմ. բարձրացիր ու քաշիր քեզ հետ դէպի վե՛ր. դէպի բա՛րձրը բոլորիս, բոլորիս . . .



Յեւոյ խօսում է մասնաճիւղի նախա-  
զահ՝ Տօքթ. Բիւթիկեանը, խօսում է ժո-  
ղովուրդին, ծնողներին, յորդորում զարկ  
տալ կազմակերպութեան, ուղարկել զա-  
ւակներն անվարան մրցումներին, բանա-  
կումներին, որովհետեւ նրանք աշտեղէն  
պիտի վերադառնան կրկնակ ուժ հաւա-  
քած ֆիզիքական եւ բարոյական: Տոք-  
տէօրի խօսքէն վերջ՝ ժողովուրդը եկե-  
ղեցու զաւիթ է իջնում, ուր պիտի վառ-  
ուէր բանակումի կրակը: Բոցավառում  
է խարոյկը՝ լոյս ու ջերմութիւն սփռելով  
շուրջը: Տրամադրութիւնը փոխուած է,  
խորհուրդը մնաց ներսը, աւելի ճիշդ  
սուղեց սրտի խորքը ու կեանքը դուրս  
ժայթքեց թոքերէն, մկաններէն, աչքե-  
րէն: Սկառուներ, գայլիկներ բոլորած  
խարոյկը երզում են, արտասանում, ար-  
տասանում, պարում հայրենի շուրջ-  
պարերը խաղում, թռչկոտում ստոստում  
են գայլիկները ու կայտում կրակի  
շուրջ թիթեռների պէս: Ո՛րքան կեանք,  
ս՛րքան արիւն:

Ձան, իմ ազգի արեան գաւակներ,  
գօրացէք, թեւ առէք, հայրենի լեռները  
ձեզ են սպասում:

Գայլիկների խմբապետը իր կողմէն  
նուէր է տալիս երեք գայլիկների, որոնք  
տարին բոլոր պարտաճանաչ են եղել,  
կարգապահ: Երջանկութենէն փայլում  
են պարզեւառու գայլիկները ու կարծես  
մեծանում են յանկարծ:

«Փոքր խմբապետը» այգպէս են ան-  
ւանում գայլիկներն իրենց խմբապետին,  
իսկ ես աւելացնում եմ, Մեծ եղբայրը,  
աւելին՝ քան եղբայր. միթէ՞ նա չէ, եւ  
իր սկառու ընկերները որ իրենց իսկ  
ուսերին նստեցրած՝ տուն են բերում  
պտոյտների երկար ճամբաներէն յոգնած  
փոքրիկ, թուլակազմ հայ սկառուներին:  
Միթէ՞ այս բոլորին տեղեակ չեն Ալֆօր-  
վիլի հայ մայրերը. ինչո՞ւ են նրանց  
զաւակները փողոցներում թափառում:

Ուշ է, պէտք է վերջացնել, թէև կարելի  
է մինչեւ լոյս շարունակել, աջպէս ջերմ  
է մթնոլորտը: Ու մեծ խմբապետը ժի-  
րայր վերջին խօսքը խրատական է ա-  
սում: Խարոյկի շիջող կրակը տխուր

ցոլք է զցում նրա դէմքին, որ խոհուն  
է, լուրջ: Թեւերը խաչաձև, հանդարտ ու  
վճռական, հատիկ հատիկ արտասանում  
է նա բարոյական, գործնական վերելքի  
ճամբէն ցուցնող իր խրատականը: Ու  
թւում է ինձ թէ խարոյկը մեր պապե-  
նական օճախն է, սկառուներն ու գայ-  
լիկները նահապետական մեծ ընտանիքի  
նոր սերունդը, որ բոլորած օճախի շուր-  
ջը իր փորձառու կեանքի չարն ու բա-  
րին տեսած Պապիբերնէն՝ կեանքի պատ-  
գամն է լսում: Օ՛, իմ երիտասարդ եղ-  
բայրներ, որպիսի մեծ հարուած տուեց  
ձեզ մեր թշնամին: Ո՛ւր են մեր պապե-  
րը, ս՛ւր են մեր մամերը, որոնք նոր սե-  
րունդին կեանքի հէքեաթը պիտի պատ-  
մէին: Վաղաժամ անյայտացան նրանք,  
ու մի մեծ բեռ դրեցին ձեր ուսերին դեռ  
երիտասարդ, դեռ հեքեաթի, խրատի  
կարօտ, հեքեաթ պիտի պատմէք նոր  
սերունդին: Գիտեմ, գիտեմ, որ մեր նահա-  
տակ պապերի, հայրենի հողին ձեր մէջ  
է ապրում ու դուք՝ թէ ձեր եւ թէ երի-  
տասարդ հողով պիտի կարողանաք բար-  
ձրանալ եւ բարձրացնել:

Յեւոյ ներդաշնակ ու զգացմունքով  
երզում են Տէրունական աղօթքը, որից  
յեւոյ պիտի ցրւին ու քնեն:

Մինչդեռ ժողովուրդը հեռանում է  
զոհ եւ զզացուած՝ աղերքը արձարծում  
են խարոյկը, լարում վրանները, եւ քա-  
ղաքէն եկած սկառուները զիշերում են  
եկեղեցու զաւթում, որպէսզի վաղ առա-  
ւօտեան տեղի ընկերներին հետ անտառ  
զնան:

Հեռանում եմ ու թւում է ինձ թէ մի  
քանի պատանիներ չեն բանակողները  
այլ հարիւրներ, հազարներ, որ լուսաբա-  
ցին պիտի զարթնեն աշխոյժ ու  
քայլեն դէպի հայրենի անտառները,  
լեռները, բա՛րձր, բա՛րձր Մասսի գա-  
զաթը:

Ի. Լ. Լ. Ե. Բ. Ի. Զ. Ա. Ե. Գ.




# ՄԵՐ ՏԱՆ ՍՈՒԳԵՐԸ

## Cappyի ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Խորին կսկիծով կը ծանուցանենք մահը ծաղկատի հայորդիի մը՝

### ԺԻՐԱՅՐ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

Հազիւ 22 գարուններ բոլորած երիտասարդ մը Հ. Մ. Բ. Մ.ի Մարսէյի հիմնադիրներէն եւ աչքառու մարզիկներէն, քանի անգամներ ախոյեան վազքի եւ ծանօթ Ֆրանսական մարզական շրջանակներուն ալ: Տեղւոյն ելեկտրկ. եւ առեւտրական բարձր. դպրոցներուն հետեւած: Գաժան եւ կարճատեւ հիւանդութիւն մը խլեց զինք մեզմէ օգոստոս 25ին փարիզի մէջ:



Վաղամեռիկ ԺԻՐԱՅՐ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Ֆրանսական սկաուտական կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ հիմնուած է սկաուտ-խմբապետներ պատրաստելու համար դպրոց մը *Camp-Ecole de Scoutisme Français* անունով ուր ամէն տարի երեք շրջանէ բաղկացեալ դասընթացքներ տեղի կունենան: Դասախօսութիւնները կ'աւանդուին ազգային կամ շրջանի խմբապետներէն:

Այս տարուան երկրորդ շրջանը 28րդ դասընթացքն է դպրոցին հիմնուէլէն իվեր (1925) տնօրէնութեամբ Charles Dietzի: Դասերուն կը հետեւին երեք Աւստրիացի որոնք մասնաւորաբար եկած

րիչ Պ. Հ. Աթթարեան եւ Պ. Ա. Գիպրիմեան:

Բազմամիւ ծաղկեպսակներ կային զետեղուած դագաղին վրայ, փարիզի կեդր. վարչութիւնն ալ ծաղկեփունջ մը դրկած էր: Հէք թիրայրին դագաղը մինչեւ Գասմէլան ուսամբարձ տարին իր ընկերները:

Մեր անկեղծ վշտակցութիւնները Տէրտէրեան եւ փափազեան ընտանիքներուն, պարագաներուն, եւ Հ. Մ. Բ. Մ.ի Մարսէյի մասնաճիւղին:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ

Մարմինը Մարսէյի փոխադրուելով յուղարկաւորութիւնը կատարուեցաւ խունըն բազմութեամբ մը եւ նախագահութեամբ Պալաքեան եպիսկոպոսի: Հ. Մ. Բ. Մ.ի սկաուտներ եւ հարիւրաւոր անդամներ կ'առաջնորդէին թափօրը: Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ արարողութիւնը:

Պարտէզին մէջ յոյժ գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ մեծանուն աշխարհագրագէտ Պ. Զատիկ խանգատեան, որ յատկապէս Մարսէյի եկած էր այս առթիւ: Խօսեցաւ նաեւ Պ. Մ. Մալումեան ինչպէս եւ Հ. Մ. Բ. Մ.ի տեղական վա.

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ողբացեալ թիրայր Տէրտէրեանի մահուան առթիւ Պ. Զատիկ խանգատեան տասը ձեռք սկաուտական հագուստ նըւիրած է Մարսէյի Հ. Մ. Բ. Մ.ի սկաուտներուն: Պ. խանգատեան ուրիշ առիթներով ալ ազնուօրէն աջակցած է Հ. Մ. Բ. Մ.ի փարիզի շրջանին, նուիրելով սկաուտական հագուստներ եւ չի խնայելով իր բարոյական աջակցութիւնը Հ. Մ. Բ. Մ.ի յառաջդիմութեան համար:





**Շարժումը ԽՍՀՄ-ում և Կարգավորումը**

են վիճակային, երեք Լիբանանյան զորքեր, մէկ Պելճիքացի, 20է աւելի Ֆրանսացիներ երկրին զանազան կողմերէն և երկու հայեր՝ Հ. Մ. Ը. Մ.ի կողմէ:

Երբ Շարժումը հասանք խմբապետը տաք ընդունելութիւն մը բրաւ մեզի ու բաւական երկար խօսակցութենէ վերջ աւելցուց.

«Շատ ուրախ եմ որ հայերը այսչափ ուշադրութեամբ կը հետեւին սկաուտական շարժման, փոքրիկ ժողովուրդները ամէնէն շատ պէտք ունին անոր:»

Օրական 5-6 ժամ դաս տեղի կ'ունենար որոնք կ'աւանդուէին մասնագէտներէ ինչպէս Lorenzo (Lion Hardi) Vieux Renard (Com. rég. Languedoc) André Lefevre (Commissaire National E. D. F.) Oncle Bob. և հոչակաւոր Nœud de Chaise:

Դպրոցը յաջողապէս աւարտելու պայմաններէն մին էր հեռախօսական բանակումը (Exploration) որ կը կայանայ 20 քիլոմետր ճամբայ կտրելու մէջ, բրաւ ճամբուն քարտէսը պատրաստել, սոյն բանակումի ընթացքին իւրաքանչիւր սկաուտ, որուն առաջուց տրուած էր պէտք եղածը, ստիպուած էր հաց եփել և նոյն հացէն կտոր մը բերել

մասնակցելու համար հաց եփելու մըրըցումին, որուն երկու առաջինները հայերըս եղանք:

Առաջին բանակումի կրակին երգեցինք «Յառաջ Նահատակ»ը եւ յաջորդաբար միւս սկաուտական երգերը, որոնք այն աստիճան սիրուեցան մեր օտար եղբայրներէն որ ստիպուեցանք օտար սկաուտներու համար Ֆրանսէրէն զիրերով հայերէն հնչումները զրել «Սկաուտը ինչ կուտէ» երգը:

Շատ սերտ յարաբերութիւններ հաստատեցինք մեր օտար եղբայրներուն հետ, Աւստրիացի սկաուտները մեզ յայտնեցին որ շատ ուրախ պիտի ըլլային եթէ մեր Միութիւնը սկաուտական պատւիրակութիւն մը զրկէր իրենց տարեկան բանակումին որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ զարնան վիճակայի մօտերը:

Ամբողջ բանակումի տեսողութեան Ֆրանսական և միւս զբօշակներու կողքին կը ծածանէր նաև մեր երազողները:

ՄԵԼԻՔՈՆ ՍՍՀՄԿԵԱՆ  
Սկաուտ-խմբապետ





ՖԻԼԻՊԻՆԻ ԵՒ ԹԱԹԱՐ-ՊԱՋԱՐՃՐԳԻ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ  
ԵՂ ԲԱՅՐԱԿԱՆ ԿԱՄԱԽԱՐԵՈՒՄԻ ՄԵՐ ԱՌԹԻՆ ՆԿԱՐՈՒՄԸ

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ  
27 օգոստոս 1930

...Սկիզբէն ի վեր ամէն ջանք ըրինք սկաուտական զործին կազմակերպութեան համար-բաւական թիւով պատանիներ կան որոնց համար խիստ օգտակար պիտի ըլլայ սկաուտութիւնը: Տեղական սկաուտական կազմակերպութիւնը համամիտ է մեզի, պիտի աշխատինք վաւերացուիլ իր կողմէ:

Կը յուսանք մօտ ատենէն կազմութեան մասին զրել ձեզի:

ԹՂԹԱԿԻՑ

## ՄԵՔՍԻՔԱ

Թերթիս արտօնատէր Պ. Տիրան Բէրչէմլեան, գործօն ու եռանդուն Հ. Մ. Ը. Մ. ական մը, որ կը գանուի Մեքսիքօ ձեռնարկած է կազմակերպել տեղւոյն

Հ. Մ. Ը. Մ. ի Մասնաճիւղը, ֆութպոլի եւ սկաուտական ճիւղերով և արդէն այս ուղղութեամբ սկսած է նախապատրաստական լուրջ աշխատանքի: Վստահ ենք թէ մօտ ատենէն, Մեքսիքօն եւս պիտի ունենայ իր ֆութպոլի եւ երկսեռ սկաուտական խումբերը:

## ՊՈՒԼԿԱՐԻԱ

Այցելուածին մը դէպի Այթոս քաղաքը.— Հ. Մ. Ը. Մ. ի նոր Մասնաճիւղ մը կը հիմնուի.— Մարզական դաշտահանդէս.- Տօքթ. Հայր Ս. Կոզեանի բանաստեղծութիւնները.—

ՊՈՒՐԿԱՋ, 0գոստոս 1930

Հ. Մ. Ը. Մ. ի Պուրկազի ճիւղին համար, ընթացիկ ամառուան եղանակը խանդավառ և արդիւնաւոր շրջան մը եղաւ: Իրարու յաջորդեցին այցելութիւնները, հանդէսները, մարզական դաշտահանդէսները, բանաստեղծութիւնները և մրցումները, որոնք այնքան ոգեւորութիւն ստեղծեցին:



Հ. Մ. Ը. Մ.ի սկառուաները և գայլիկները, զեղեցիկ գաղափարը ունեցած էին, Յուլիս 12-13 զոյգ տօներու առթիւ՝ այցելութիւն մը տալ զէպի Այթոս քաղաքը, այդ մոռցուած գաղութին մէջ խանդավառութիւն ստեղծելու և Հ. Մ. Ը. Մ.ի ճիւղ մը հիմնելու համար: Սկառուաներուս մեծ մասը՝ Յուլիս 11ին, կէս զիշերէն յետոյ քալելով զացիւնք Այթոս (5 ու կէս ժամ), իսկ գայլիկները և փոքր սկառուաները, միւս առտու ինքնաշարժով եկան:

Այթոսի մէջ բանակեցանք քաղաքային պարտէզը, որ քաղաքապետութեան կողմէ ազնուօրէն մեզի տրամադրուած էր:

Այդ օրը, կէսօրէ վերջ, ունեցանք դաշտային հանդէս մը, որու ընթացքին մէջ ընդ մէջ եղան՝ մարզանքներ, բուրգեր, պարկարշաւ, պարանաձգութիւն, դրօշախօսութիւն, սկառուական խաղեր, արտասանութիւններ, եւայլն, որոնք մեծապէս ոգեւորեցին ներկաները:

Երեկոյեան տեղի ունեցաւ «կրակի շուրջ» որը եւս մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Յաջորդ օրը, առաւօտուն, խումբով և թմբուկին առաջնորդութեամբ գացինք տեղւոյն փոքրիկ մատուռ-եկեղեցին, ուր Ամատունի Ծ. վարդապետ հայրենաշունչ քարոզ մը խօսեցաւ:

Նոյն օրը, բանակատեղիին մէջ հիւը դրուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի Այթոսի ճիւղին, որ առաջին առթիւ իսկ ունեցաւ 25 անդամներ:

Իրիկնամուտին ուրախ-գուարթ վերադարձանք Պուրկազ, երկու օրուայ հաճելի ժամանց մը վայելելէ և Այթոսի երիտասարդութիւնը աշխատանքի մղելէ յետոյ:



Մասնաճիւղս զէպի Այթոս քաղաքը կատարած իր այցելութենէն յետոյ, վարդապետի տօնին առթիւ, քաղաքիս մէջ կազմակերպած էր զեղեցիկ Նաւասարդեան դաշտահանդէս մը, որ տեղի

ունեցաւ ամսոյս 27ին, Որսորդներու Պարտէզին մէջ: Այդ օրը, Հ. Մ. Ը. Մ.ի համար խանդավառ օր մը եղաւ: Առաւօտուն գլխաւոր պողոտային վրայ կատարուած տողանցքով մը եկանք եկեղեցի ու ներկայ եղանք եկեղեցական արարողութեանց: Կէսօրէ վերջ, մասնաճիւղիս ամբողջ կազմը՝ գայլիկ, սկառու և մարդիկներ, իրենց պաշտօնական համազգեստներով հաւաքավայրէն ճամբայ ելան զէպի հանդիսավայր՝ առաջնորդութեամբ մասնաճիւղային, մարզական և սկառուական դրօշներուն, և ընկերակցութեամբ քաղաքային նուազախումբին: Մեր տղոց անցքը շատ տպաւորիչ էր: Անոնք կը քալէին բարձրագլուխ ու առոյգ, և զարմանք կը պատճառէին փողոցներու անկիւնները հաւաքուած օտարներուն, որոնք հիացումով կը դիտէին տառապեալ ու փոքր ազգի մը՝ հոգեպէս ու մարմնապէս բարձր այս վտարանդի զաւակները որոնք անխուսափելի հիմնաքարերը պիտի ըլլային վաղուան սերունդին: Խումբը հասնելով Որսորդներու Պարտէզը, անցք մը կատարեց ներկաներուն առջեւէն և սկսան ըզբաղուիլ վրաններու լարումով:

Դաշտահանդէսը սկսաւ ժամը 5ին: Նախ Հ. Մ. Ը. Մ.ի անդամները խմբերգեցին «Յառաջ Նահատակը», որմէ վերջ մէջ ընդ մէջ կատարուեցան մարզանքներ, բուրգեր, պարկարշաւ, խաղեր, արտասանութիւն (Դ. Վարուժանի «Վահագն»ը), աթլետիկ խաղեր, եւայլն, որոնք մեծապէս խանդավառեցին հանդիսականները:

Ի միջի այլոց, պերճիմաստ ու զեղեցիկ բանախօսութիւն մը ըրաւ, Ֆիլիպէն այս առթիւ յատկապէս հրաւիրուած Տօքթ. Հայր Ս. Կողեան (Տնօրէն Թիլիպէի Միսիթ. վարժարանի): Գեր. Հայրը, խօսելով Հ. Մ. Ը. Մ.ի մասին զայն հռչակեց «զպրոցէն դուրս լաւագոյն ու միակ վառարանը, որ հայ պատանին եւ հայ երիտասարդը հայ շունչով կ'ողորէ և զանոնք ֆիզիքապէս, բարոյապէս եւ իմացականապէս կը զարգացնէ ու կը դաստիարակէ. . .» ու



անոր գոյութիւնը գտաւ՝ «աւելի քան երբէք անհրաժեշտ»:

Այս բանախօսութենէն յետոյ, որ լարուած ուշադրութեամբ ունկնդրուեցաւ, սկառուները եւ դայլիկները «զգայո՛ւմ ա՛՛ չ. Ս. Կողեան» բացայայնչութիւններով լեցուցին օրը:

Իրեկոյեան, ուրախ տրամադրութիւններով ու հաճելի երգերով վերադարձանք քաղաք:



Մասնաճիւղս, օգտուելով Տօթք. չ. Ս. Կողեանի ներկայութենէն՝ Յունիս 28ին կազմակերպած էր հրապարակային բանախօսութիւն մը՝ Զկօվօբիստներու սրահին մէջ:

Համակրելի վարդապետը ի ներկայութեան ընտրեալ բազմութեան մը կէս ժամուայ զեղեցիկ բանախօսութիւն մը ըրաւ, նիւթ ունենալով «ազգասիրութիւն»ը:

ԳՐԻԳՈՐԻԿ

Սկառու առաջնորդ

Յ. Գ. Յաջորդով կուտանք Պուլկարիոյ շրջանի Մասնաճիւղերուն մէկ պատկերը:

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԹԱԻՐԻՁ, 25 Յունիս 930

Տեղիս մասնաճիւղը կազմուած է, Պ. Արամ Ալշուշեանի նախագահութեամբ 1929 Հոկտեմբերին:

Առաջին վարչական կազմը ընտրուեցաւ վեցամսեայ ժամանակամիջոցով որուն յաջորդեց երկրորդ Ընդհ. Ժողով մը եւ ընտրեց հետեւեալ վարչութիւնը:

Պ. Պ. Խաչիկ Թովմասեան (Ատենապետ), Բարկէն Յարութիւնեան (քարտուղար), Ստեփան Թունեան (Գանձապահ), Էսպերօ Յովհաննէսեան (մարզական), Երւանդ Յովսէփեան (հրահանգիչ եւ պասքէթպոլի վարիչ), Լեւոն Բաբայեան (ֆութպոլի վարիչ): Պ. Արամ Ալշուշեանը խորհրդակցական ձայնով մասնակցած է վարչութեանս օժանդակած է իր օգտակար խորհուրդներով:

Մասնաճիւղս ունեցած է քանի մը Ընդհ. Ժողովներ ուր խորհրդակցած է մարզական պիւտճէի եւ տեղական մարզական կանոնադրի խնդիրներով:

Մասնաճիւղս կազմութեան օրէն սկսած, լուրջ ուշադրութիւն դարձուցած է մարզական ճիւղին. ունեցանք պասքէթպոլի, ֆութպոլի եւ աթլետիկ մրցումներ եւ զանազան մարզական հետաքրքիր խաղեր: Զմեռը պարապած ենք գործիական մարզանքներով, ղեկավարութեամբ մեր մարզիչ Պ. Էսքերօի, որ իր հմտութեամբ զո՞հ ձգած է ընկերները: Գարնան սկսած ենք դաշտային խաղերու, առաւօտեան ժամը 6էն 7ը, Լիւլաւայի Հայկազեան-Թամարեան դպրոցի մարզադաշտին մէջ: Մեր ընկերներէն Լ. Բաբայեան եւ Է. Յովհաննէսեան լրջօկը տանին իրենց մարզիչի աշխատանքները:

Մինչեւ այսօր, բոլոր անդամները կանոնաւոր կերպով կը տանին իրենց աշխատանքները: Վարչութիւնը մեծ ճիգ կը թափէ առաջ տանելու Միութիւնը որովհետեւ համոզուած է թէ, անոր միջոցով պիտի ստեղծուի համերաշխութիւնը եւ կենսունակութիւնը նոր սերունդին մէջ:

Թ. Ղ. ԹԱԿԻՅ

Մեծ հաճոյքով կը հրատարակենք վերի Թղթակցութիւնը: Պարսկաստանը որ հայութեան լուսագոյն եւ հոծ շրջաններէն մին է, Հ. Մ. Ը. Մ. ի համար լուսագոյն եւ զօրաւոր շրջաններէն ըլլալու կոչուած է: Իրենց տեղեկագիրը մանրամասն կերպով մեր ձեռքին տակն է. Թէեւ վտիտ բայց խոստումնալից է ան. յոյս ունինք որ մօտ առնեն Հ. Մ. Ը. Մ.ը պիտի ուժեղանայ հոն եւ պիտի ծաւալի Պարսկաստանի բոլոր հայկական շրջաններու վրայ:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ







ՏԷՍԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Ա. ԵՒ Բ. ԹԻՄԵՐԸ

### ՖՐԱՆՍԱ

ՌՕՄԱՆ, 26 Սեպտ. 1930

Տեղիս մէջ եւս կազմուեցաւ Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղ մը: Կոչ կ'ուզողենք անոնց որ կ'ուզեն իրենց պարապոյ ժամերը նուիրել մարմնակրթանքի գործին:

Հ. Մ. Ը, Մ.ի մասնաճիւղը արդէն կազմուած է և 5 Հոկտ.ին պիտի կատարուի նոր անդամներու արձանագրութիւնը:

Յոյս ունենք որ, Ռոմանի երիտասարդութիւնը պիտի փութայ արձանանագրուիլ նարակազմ մասնաճիւղին:

Յ. Մ.

ԼԻՈՆ, 17 Սեպտ. 930

Հ. Մ. Ը, Մ.ը կազմուած է տեղիս մէջ, 1924ին, տկար շրջան մը անցնելէ վերջ, ներկայիս կրկին ձեռք անուած է գործը, ամուր հիմերու վրայ դնելու համար: Նոր վարչութիւն մը ընտրուած է հետեւեալներէն՝

Պ, Պ. Ե. Սալմաստեան (Ստենապետ)

Յ. Միւզմէճեան (քարտուղար), Ա. Գապանան (զանձապահ), Ա. Պալեան (փոխատենապետ), Ն. Փորթուքալեան (Խորհրդակահան), Գ. Պէրպէրեան (մարզական և ֆութպոլի վարիչ):

Միութեանս գոյքերը մէկտեղ հաւաքած ենք և պատրաստութիւն կը տեսնենք Լիկի մրցումներուն մասնակցելու:

Մեծ ջանք կը թափենք սեփական դաշտ մը ունենալու, կը յուսանք որ մօտ ատենէն պիտի իրականանայ այդ մեր փափաքը:

Հոս կան բաւական թիւով երիտասարդներ, որոնք ֆրանսական խումբերու մաս կը կազմեն. երբ դաշտը ձեռք ձգենք յոյս ունինք որ բոլորն ալ պիտի հաւաքուին իրենց ազգային Միութեան շուրջ:

Հայ Սկաուտ դրկեցէք մեզ, մեր անդամները կը փափաքին ունենալ իրենց օրկանը:

Յոյս ունինք որ մօտ օրէն լաւ գործունէութեան պիտի սկսինք:

ԹՂԹԱԿԻՅ



# ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆԻՐ

## ԱՅԼԵԹԻՉՍ

Յակոբ Մամիկոնեան Յունիս 15ին Գօլոմպի մարզարանին մէջ 1,1իկ Բարիզիէնի կողմէ կազմակերպուած մրցումներու ընթացքին ձողով բարձրութիւն ցատկելու մրցումը շահեցաւ 3 մեթր 56 ս.ով որ կը կոտրէ հայկական մրցանիշը (3.32) որ նոյնպէս իրն էր. այդ արդիւնքին հետեւանքով Յ. Մամիկոնեան F. F. A. ի կողմէ դասուեցաւ առաջին դասակարգը:

Նիզակ, 72 մ. 38

Ֆինլանտացի հոչակաւոր մարզիկ Ժարվինէն որու մասին զրած ենք շայ Եկառուտի մէջ, Սթոքոլմի մէջ կոտրած է նիզակ նետելու աշխարհի մրցանիշը, հասնելով 72 մեթր 38 ս.ի — հայկ. մրցանիշը 50 մեթր 0,5 է եւ կը պատկանի Յակոբ Թաշճեանի, Թորինոյէն:

1500 մեթր 3 վ. 48 5/10

Մարզական թերթերը անհաւատալի լուր մը տուին վերջերս. Ֆինլանտացի հոչակաւոր մարզիկ մը՝ Նիւրմի զոր այլևս «ձեր» կը նկատէինք, 1500 մեթր վազքի մը մէջ կոտրած է այդ հեռաւորութեան աշխարհի մրցանիշը (որ կը պատկանէր գերմանացի Բէլցերի 3վ. 51 երկվ.) 3վ. 48 5/10 եկրվ. անհաւատալի ժամանակով: Հայկ. մրցանիշը 4վ. 55 երկվ. է եւ կը պատկանի Կ. Թաշճեանի:

## ՄԻՋՊԱԼՔԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Վերջերս Աթէնքի մէջ տեղի ունեցան ողիմպիական խաղեր մասնակցութեամբ Յունաստանի, Թուրքիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ, Ռումանիոյ լաւագոյն մարզիկներուն:

Ահաւասիկ քանի մը արդիւնքներ. —

100 մեթր վազք. — Լամբու (յոյն)

11 երկվայրկեան:

400 մեթր արդելարշաւ. — Մանտիքաս, (յ.) 56 3/5 երկվ.:

1500 մեթր. — Պետան (պուլկ.) 4 վ. 18 երկվ.:

Բարձրութիւն. — Բարանիքօլաու (յ.) 1 մ. 80 ս.

Դրօշարշաւ. — 800+400+200+100 Սերպիա 5 վ. 34 1/5 երկվ.

10,000 մեթր վազք. — Պէքսիքրիս (յ.) 34 վ. 1 երկվ.:

Վերջնական արդիւնք. — Ա. Յունաստան 142 կէտ, Բ. Սերպիա 75 կէտ, Գ. Ռումանիա 50 կէտ, Դ. Պուլկարիա 56 կէտ, Ե. Թուրքիա 29 կէտ:



Վերջերս Սելանիկի մէջ տեղի ունեցած են Յունաստանի ամլեթիք ախոյեանութեան մրցումները որոնց արդիւնքները անհաւասիկ:

100 մեթր. — 11 3/10 երկվ.

200 » 23 1/5 »

400 » 52 9/10 »

800 » 2վ. 7 2/5 »

1500 » 4վ. 23 1/5 »

5000 » 16վ. 8 5/10 »

110 մեթր ցանկարշաւ 16 երկվ.

400 » » 1վ. 2 9/10 »

Բարձր ցատկել, — 1 մ. 80 :

Չողով բարձր. — 5 մ. 75 :

Երկայնութիւն. — 6 մ. 78 :

Երեք քայլ. — 15 մ. 90 :

Երկաթ. — 14 մ. 57 :

Սկաւառակ. — 37 մ. 68 :

Նիզակ. — 50 մ. 276

Ինչպէս կ'երևի մեր յոյն բարեկամները մեծ յառաջդիմութիւններ ըրած են ամլեթիք խաղերու մէջ:

## ՖՈՒԹՊՈԼ

Միջազգային մրցումներու արդիւնք: Պելճիքա յաղթական Հոլանտայի 4-1  
Չեխօսլավաքիա » Պելճիքայի 3-2  
Պելճիքա եւ Շուէտ հաւասար 2-2  
Գերմանիա յղթկն. Հունգարայի 5-5

## ՈՒՐՈՒԿՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Մինչ ժընէվի մէջ կը վերջանար զըւրցերիական Սէրվիթ խումբին կողմէ կազմակերպուած միջազգային մրցահանդէսը — վերջացած Հունգարական Ուժբէսթ խումբին յաղթանակով Չեխօսլավաքիայի, Աւստրիական Ֆըրսթ Վինաի առջեւ — անդին Մօնթէվիտէոյի մէջ



կ'սկսէր Ուրուկուայի անկախութեան հարիւրամեակին առթիւ կազմակերպուած ազգային խումբերու մրցահանդէսը, որու արդիւնքները անաւասիկ.—

Յրանսա յղթկն. Մեքսիքայի	4-1
Մ. Նահանգներ յղթկն. Պելճիքայի	3-0
Ռումանիա	» Բերուի 3-1
Եուկուադիա	» Պրագիլիոյ 2-1
Արժանթին	» Յրանսայի 1-0
Շիլի	» Մեքսիկայի 3-0
Եուկուադիա	» Պօլիվիոյ 4-0
Մ. Նահանգներ	» Բարակուայի 3-0

Տըմի-Ֆինալ

Արժանթին յղթկն. Մ. Նհնգներու.	7-1
Ռուրուկուա	» Եուկուադիոյ 6-1

Ֆինալ

Ռուրուկուա յղթկն. Արժանթինի 4-2:  
Այսպէսով Հարաւ. Ամերիկայի փոքր հանրապետութեան ազգ. խումբը կը շահի իր կազմակերպած մրցահանդէսը, վերանորոգելով 1924 և 1928ի Միջ. Ողիմպիականներուն իր յաղթանակները և շահելով F. I. F. A. ի կողմէ նուիրուած ոսկիէ հիւանալի բաժակը որ պատրաստուած էր Փարիզի մէջ:



Անաւասիկ 1930ի Ֆութպոլի եղանակին փոխառն առաջ կատարուած քանի մը խումբեր.—

Արժանթին կը յաղթէ Պելճիքայի	3-1
» » Նունգարիոյ	3-0
Արժանթին և Գերմանիա հաւասար	3-2
» » և Աւստրիա	» 0-0
Արժանթին կը յաղթէ Յրանսայի	2-0
Չեխօսլովաքիա	» Սպանիոյ 2-0
Սպանիա	» Իտալիոյ 3-2
Իտալիա և Հոլանտա հաւասար	1-1
Պելճիքա կը յաղթէ Յրանսայի	6-1
Չուիցերիա և Հունգարիա հաւար.	2-2
Չեխօսլովիա և Հունգարիա հաւա.	1-1
Հոլանտա և Պելճիքա	» 2-2
Գերմանիա կը յաղթէ Չուիցերիոյ	3-0
Ռումանիա	» Ռումանիոյ 2-1

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՆԻ ՄԸ ՄՐՅԱՆԻՇԵՐ

Արանց	100 մեթր.— 10 <sup>3</sup> / <sub>5</sub> Երկվ. Շ. Բէտօք և թուլէն (Ամ.)
200 »	20 <sup>3</sup> / <sub>5</sub> Երկվ. (220 Կարտա) Ռ. Լըք. (Ամ.)
400 »	47 Երկվ. Է. Սըէնսըր (Ամ.)
800 »	1 վ. 50 <sup>3</sup> / <sub>5</sub> Երկվ. Սէրաֆէն Մարթէն (Յր.)
1500 »	3 վ. 51 Երկվ. Օ. Բէլցըր (Գերմանացի)
5000 »	14 վ. 28 <sup>3</sup> / <sub>5</sub> Երկվ. Բ. Նիւմի (Յինլ.)
110 մերթր արգելարշաւ.—	14 <sup>2</sup> / <sub>5</sub> Երկվ. վենսթրոմ (Շուէտ)
Ուժով բարձր.—	2մ. 03 Հ. Օսպրն (Ամ.)
» Երկայն.—	7մ. 93 Ս. Քաթոր (Հայիթի)
Չողով բարձր.—	4 մ. 30 Պարնս (Ամ.)
Երկաթ.—	16 մ. 045 Հիրշֆէլտ (Գերմ.)
Սկաւառակ.—	49 մ. 90 Գրէնց (Ամ.)
Նիզակ.—	71մ. 01 Լէօնտիքսթ (Շուէտ)

Կանանց

50 մեթր.—	6 <sup>2</sup> / <sub>5</sub> Երկվ. Մէժգլիքովա (Չեխ.)
60 »	7 <sup>3</sup> / <sub>5</sub> Երկվ. Նոյնը և Ռաաի-տօ (Յր.)
80 »	10 Երկվ. Նոյնը Երկուքը և Կանեէօ (Յր.)
100 »	12 Երկվ. Քուք (Քանատա)
200 »	24 <sup>7</sup> / <sub>10</sub> Երկվ. Հիթոմի (Ճափոն)
Ուժով բարձր.—	1. մ. 605 Ժիգօֆ (Հոլ.)
» Երկայն.—	5 մ. 98 Հիթոմի (Ճափոն)
Նիզակ.—	38 մ. 39 Հարկ (Գերմ.)
Երկաթ.—	12 մ. 85 Հոպլայն »
Սկաւառակ.—	39 մ. 62 Քանորաքա (Լէէ)









կ'սկսէր Ուրուկուայի անկախութեան հարիւրամեակին առթիւ կազմակերպուած ազգային խումբերու մրցահանդէսը, որու արդիւնքները ահաւասիկ.—

- Յրանսա յղթկն. Մեքսիքայի 4-1
- Մ. Նահանգներ յղթկն. Պելճիքայի 3-0
- Ռուսներ » Բերուի 3-1
- Եուկուադիա » Պրագիլիոյ 2-1
- Արժանթին » Յրանսայի 1-0
- Շիլի » Մեքսիկայի 3-0
- Եուկուադիա » Պօլիվիոյ 4-0
- Մ. Նահանգներ » Բարակուայի 3-0

Տըմի-Ֆինալ

- Արժանթին յղթկն. Մ. Նահանգներու. 7-1
- Ուրուկուա » Եուկուադիոյ 6-1

Ֆինալ

Ուրուկուա յղթկն. Արժանթինի 4-2:  
 Այսպէսով Հարաւ. Ամերիկայի փոքր հանրապետութեան ազգ. խումբը կը շահի իր կազմակերպած մրցահանդէսը, վերանորոգելով 1924 և 1928ի Միջ. Ողիմպիականներուն իր յաղթանակները և շահելով F. I. F. A.ի կողմէ նուիրուած ոսկիէ հիւանալի բաժակը որ պատրաստուած էր Փարիզի մէջ:



Ահաւասիկ 1930ի Ֆութպոլի եղանակին փակումէն առաջ կատարուած քանի մը արդիւնքներ.—

- Իռլանտա կը յաղթէ Պելճիքայի 3-1
- Իտալիա » Հունգարիոյ 3-0
- Չէխօսլավաքիա » Յրանսայի 3-2
- Անգլիա և Գերմանիա հաւասար 3-3
- » և Աւստրիա » 0-0
- Սկոտլանդ կը յաղթէ Յրանսայի 2-0
- Չէխօսլավաքիա » Սպանիոյ 2-0
- Սպանիա » Իտալիոյ 3-2
- Իտալիա և Նոլանտա հաւասար 1-1
- Պելճիքա կը յաղթէ Յրանսայի 6-1
- Զուիցերիա և Հունգարիա հաւար. 2-2
- Չէխօսլավիա և Հունգարիա հաւա. 1-1
- Հոլանտա և Պելճիքա » 2-2
- Գերմանիա կը յաղթէ Զուիցերիոյ 3-0
- Եուկուադիա » Ռուսներու 2-1

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՆԻ ՄԸ ՄՐՑԱՆԻՇԵՐ

Արանց

- 100 մեթր.— 10<sup>2</sup>/<sub>5</sub> Երկվ. Շ. Բէտօք և Թուլէն (Ամ.)
- 200 » 20<sup>3</sup>/<sub>5</sub> Երկվ. (220 Եարտա) Ռ. Լըք, (Ամ.)
- 400 » 47 Երկվ. Է. Սըէնսըր (Ամ.)
- 800 » 1 վ. 50<sup>3</sup>/<sub>5</sub> Երկվ. Սէրաֆէն Մարթէն (Յր.)
- 1500 » 3 վ. 31 Երկվ. Օ. Բէլցըր (Գերմանացի)
- 5000 » 14 վ. 28<sup>1</sup>/<sub>5</sub> Երկ. Բ. Նիւրմի (Յինլ.)
- 110 մեթր արգելարշաւ.— 14<sup>2</sup>/<sub>5</sub> Երկվ. վենսթրոմ (Շուէտ)
- Ուժով բարձր.— 2մ. 03 Հ. Օսպրն (Ամ.)
- » Երկայն.— 7մ. 93 Ս. Քաթոր (Հայիթի)
- Զոդով բարձր.— 4 մ. 30 Պարնս (Ամ.)
- Երկաթ.— 16 մ. 045 Հիլըֆէլտ (Գերմ.)
- Սկաւառակ.— 49 մ. 90 Գրէնց (Ամ.)
- Նիզակ.— 71մ. 01 Լէօնտիքսթ (Շուէտ)

Կանանց

- 50 մեթր.— 6<sup>2</sup>/<sub>5</sub> Երկվ. Մէժզլիքովա (Չէխ.)
- 60 » 7<sup>3</sup>/<sub>5</sub> Երկվ. Նոյնը և Ռաաիտօ (Յր.)
- 80 » 10 Երկվ. Նոյնը Երկուքը և Կանեէօ (Յր.)
- 100 » 12 Երկվ. Քուք (Քանատա)
- 200 » 24<sup>7</sup>/<sub>10</sub> Երկվ. Հիթոմի (Ճափոն)
- Ուժով բարձր.— 1. մ. 605 Ժիզօֆ (Հոլ.)
- » Երկայն.— 5 մ. 98 Հիթօմի (Ճափոն)
- Նիզակ.— 38 մ. 39 Հարկ (Գերմ.)
- Երկաթ.— 12 մ. 85 Հոպլայն »
- Սկաւառակ.— 39 մ. 62 Քանորաքա (Լէ՛՛՛)





### ՅՈՒՆԱՍՏԱՆ

#### Աթիլնի

Կարեւոր առիթով մը, Յունաստան երկրորդ Ողիմպիականը յետաձգուեցաւ:

Անցնող վեց ամիսներու ընթացքին Կեդր. Վարչութիւնը Նիքը Իտա Բըլիֆի հետ գործակցաբար, յառաջ կը տանէր նախապատրաստական աշխատութիւնները: Ողիմպիականին ծախսերուն կէսը պիտի հոգացուէր Ն. Ե. Բ. Ի եւ կէսն ալ Կեդր. Վարչութեան կողմէ:

Դժբաղդաբար Ն. Ե. Բ. Ի հայասէր եւ սիրուած Ընդ. Տնօրէն Մր. Թըրպլըրի յանկարծական մահը ընդհատեց աշխատանքը:

Մր. Թըրպլըր վերջին 3 տարիներու ընթացքին նիւթապէս եւ բարոյապէս օգնած է Հ. Մ. Ը. Մ. Ի Յունաստանի շրջանի կազմակերպութեան, որուն Պատուակալ Նախագահն էր:

Դործակցութեան պայմանագրութիւնն ալ Յունիսին աւարտելով, Հ. Մ. Ը. Մ. Ի Նիքիսթեան սաներն ալ անջատուեցան կազմակերպութենէն:

Հ. Մ. Ը. Մ. Ի-եան միջմասնաճիւղային մարզական խաղերը տեղի պիտի ունենան Սեպտեմբերի կիսուն:

#### ԳԱՎԱԼԱՅԻ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Վերջին ամիսներու ընթացքին նոր մասնաճիւղեր կազմուեցան Տրամայի եւ Գավալայի մէջ:

Տրամայի Հ. Մ. Ը. Մ. Ի Վարչութեան ատենապետ Տօթ. Օհանեան Գավալա երթալով, կազմեց նոր վարչութիւն մը հետեւեալ կազմով:

Պ. Պ. Գրիգոր Պողոսեան ատենապետ, Յ. Սրմաքէշեան ատենադպիր, Ե. Թորոսեան գանձապետ, Վ. Մկրտիչեան, Մ. Թիւթիւնձեան, Մ. Ճերմակեան եւ Գ. Դերձակեան անդամներ, որոնք կը վայելեն Գավալայի երիտասարդութեան եւ համայնքին վտասնութիւնը եւ համակրութիւնը:

Սկսուտական ճիւղի կազմակերպութիւնը ուժեղացնելու համար, Հ. Մ. Ը. Մ. Ի Կեդր. Վարչութիւնը վերակազմեց Սկսուտական Կեդր. Յանձնախումբը հետեւեալ կերպով:

Պ. Պ. Արամ Կայծակ (սպայ) Ա. Տէր Յակոբեան, Պ. Մ. Սարգիսեան:

#### ԸՆԴՀ. ԱՐՇԱԻ

Կեդր. Վարչութիւնը Յունիս ամսուան ընթացքին կազմակերպեց Ընդհ. Արշաւ մը, Աթէնքի մօտ Խալանտրի գեղեցիկ ծառաստանին մէջ: Մասնակցեցան բոլոր սկսուածները եւ մարդիկները:

Տեղի ունեցան մարզական փորձեր, սկսուտական խաղեր, եւ ֆութպոլի փորձ մրցում մը:

Յաջորդ արշաւը տեղի պիտի ունենայ Սեպտեմբերի սկիզբը:

#### ԹՂԹԱԿԻՅ

### ՖՐԱՆՍԱ

ՄԱՐՍԷՅԷ, Սեպտ. 930

#### ՖՈՒԹՊՈՂ

Ֆութպոլի եզանակին վերաբացումը Մարսէյի մէջ:

Տեղւոյս Հ. Մ. Ը. Մ. Ի Ա. խումբը, որ անցեալ տարի Ա. դասաւորումի բարձրացաւ 36 ֆրանսական խումբերու մէջէն, Կիրակի 21 Սեպտ. կատարեց իր առաջին պաշտօնական մրցումը, պարտութեան մատնելով իր ամէնահին հակառակորդը եղող Union Sportortive du Rouetն 3:2ով:

Մրցումը սկսաւ ֆրանսացիներու առաւելութիւնով, որոնք աւելի մարզուած տիրապետեցին խաղին, նշանակելով իրենց առաջին կօլը խաղէն քառորդ ժամ յետոյ. բայց հայերը կազմակերպուելով, յաջողեցան լաւ «combinaison» է մը յետոյ հաւասարիւ իրենց կեդրոնի յառաջապահով: Երկու կողմէ ալ վտանգաւոր յարձակողականներ եղան առանց արդիւնքի եւ Ա. կիսախաղը վերջացաւ 1ով 1 հաւասար:

Բ. Կիսախաղին կրկին յարձակեցան, բայց մեր տղաքը աւելի թարմ տիրեցին խաղին, շատ լաւ խաղարկութիւնով մը նշանակեցին երկրորդ կօլը, որմէ ազդուեցաւ հակառակորդ կողմը, որուն յաղթութիւնը նախատեսուած էր տեղւոյս բոլոր սքօրի թերթերուն կողմէ: Սկսելով բուռն խաղարկութեան մը, ֆրանսացիները զգեանեցին մեր բերդապահը նշանակելով իրենց Բ. կօլը որ հակառակ մեր տղայոց բողոքին ընդունուեցաւ դատաւորին կողմէ:

Հ. Մ. Ը. Մ. առանց յուսահատելու ը-



բաւ կուս. յարձակողականներ, որոնց ընթացքին ընդունեց **coup franc** մը, հակառակորդ բերդէն 30 մեթր հեռու, որ զօրաւոր հարուածով մը նշանակէտի վերածուեցաւ մեր միջնադարին կողմէ:


Հանդիսականներու ծափերուն տակ հայերը սկսան պաշտպանողականի: Վերջաւորութեան մէկ վայրկեան մնացած լաւ կերպով կրցանք պաշտպանուիլ, բայց ֆրանսացիներու համակիրները դաշտ խուժեցին ստիպելով դատաւորը որ կեցնէ խաղը, **coup franc** մը սուլած ըլլալով, մեր բերդապահը երկրորդ անգամ զգեանել ուղող խաղացողին դէմ: Դատաւորին ըրած բողոքը **Fédération**ին մեղի ի նպաստ է, կը յուսանք որ սեղանի վրայ ալ շահինք խաղը:

Նոյն օրը Հ. Մ. Ը. Մ.ի Բ. խումբը պարտութեան մասնեց խաղական **Pro Patria**ի Բ. խումբը երեքի դէմ չորս կողով, ի՞նչ փոքրերը որոնք անցեալ սարի 42 խումբերու մէջէն վերջնափորձի (final) մնացած էին՝ յաղթեցին **Gallia club de Marseille**ի պահեստի խումբին Օի դէմ 3 կողով, իսկ «**Minimes**»ները հաւասար մնացին 2ով 2 **Union sportive Marseillaise**ի փոքրերուն հետ:

Հ. Մ. Ը. Մ.ի Ա. խումբը ամսոյս 19ին կը մեկնի **La Seine** քաղաքը, «**Provence**»ի բաժակի մրցումին, տեղւոյն խումբին հետ որ շրջակայի շատ զօրաւոր խումբերէն մին է: Իսկ երկրորդ պաշտօնական մրցումը տեղի պիտի ունենայ ամսոյս 26ին, երբ միեւնոյն ատեն Հ. Մ. Ը. Մ.ը իր գաշտին պաշտօնական բացումը պիտի կատարէ «**Pro Patria**»ի Ա. խումբին դէմ մրցումով մը:

Հայ ֆութպոլի շրջանակին քաջածանօթ Հ. Մ. Ը. Մ.ի անգամ եւ ֆութպոլիստ Պ. Լեւոն Պաքրճեան, Պրիւքսէլէն Մարսէյլ հաստատուեցաւ, ստորագրելով ֆութպոլի յանձնառութիւն մը Հ. Մ. Ը. Մ.էն. օրինակ թող աւնեն մեր հզարտ խաղացողները որոնք օտար խումբերու ուժը աւելցնել կ'աշխատին:

Հ. Ա.Թ.Թ.Ա.Ր.Ե.ԱՆ



ՅՈՎԱԵՓ ԵՐԱՄԵԱՆ  
Պուլկարիոյ Հ. Մ. Ը. Մ.ի  
լաւագոյն մարզիկը

ՀԱՅԿ. ՄՐՑԱՆԻՇ ՄԸ ԿՈՏՐԱԾ

Լաւ լուր մը կուզայ մեզ Պուլկարիայէն. Պուլկարահայ տարեկան մրցումներու օրը Վառնայի Հ. Մ. Ը. Մ.ի անգամներէն Յովսէփ Երամեան, որուն մասին զբաժ էինք «Հայ Սկաուտ»ի մէջ, կտարած է ուժով երկայնութիւն ցատկելու հայկ. մրցանիշը 6 մեթր 72 սանթիմով. հինը կը պատկանէր Կարապետ Շահինեանի (Իզմիր) որ 1922ի վերջին Հայկ. Ընդհ. Ողիմպիականին մէջ ցատկած էր 6 մեթր 55 սանթիմ:

Ժիրայր Խթիկեանի (երկամ 13 մեթր 15 սարգիմ) Յակոբ Մամիկոնեանի (2ող 5 մեթր 56 սանթիմ) կտարած մրցանիշերով ասիկա կ'ըլլայ երրորդ հայկ. մըրցանիշը կտարած 1950ի ընթացքին:

Le Gérant: DIRAN PERTCHEMLIAN

Imp. A-DER, 17. Rue Damesme. PARIS 13



«Շանթ», գործակալութեան հրատարակութիւնը, ԿԵՄՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ Տա-  
րեգիրքը Ա. տարի, 1931, մեծագիր, սլաօնկերագարդ, ճոխ բովանդակութեամբ  
եւ մաքուր տպագրութեամբ:

Վարչութիւն՝ Վ. Ռ. Թազուրեան, Էմբագրութիւն Մ. Մ. Պարսամեան:

Գրութիւններ՝ Տին եւ հոր գրողներու կողմէ, իրենց նկարներով կամ գի-  
մաստուէրներով: Հ. Մ. Ը. Մ.ի անգամները անոր մէջ սլաօնի գտնեն Միութեան  
մասին հակիրճ եւ գեղեցիկ գրուածք մը:

Դիմել՝ «Chanth» Arts et Lettre, 94, Rue Lafayette, Paris 9e:

ԳԱՅԼԻԿ ամսաթերթի Ա. Տարի 3, 4, 5 թիւերը, սլաօնկերագարդ եւ հետաքր-  
քական սարունակութեամբ: Հրատարակութիւն Հ. Մ. Ը. Մ.ի Հելիոպոլիսի մաս-  
նաճիւղի Գալլիկներուն: Հասցէ՝ c/o Imp. «Sahag-Mesrob» 25, ch. Tewfik, Le Caire (Egypte)

ԱՊԱԳԱՅ քաղաքական եւ հասարակական եռօրեայ թերթ: Հասցէ՝ 28, Rue  
Serpente, Paris 5e.

ՀՐԵՂԷՆ ՍԻԻՆ հոգեւոր պարբերաթերթ: Հասցէ՝ 5, Bd. Abbas, Héliopolis  
(Egypte.)

ՓԱՐՈՍ Բացառիկ թիւ, հայ մշակոյթի տօնին հուիքուած, սլաօնկերագարդ  
եւ գունաւոր: Հասցէ՝ Rue Tzar Samuli, 63, Sofia (Bulgarie),

MASSIS, հայ շահերու եւ կեանքի հուիքուած՝ Անգլերէն լեզուով: Հասցէ  
The Editor «Massis», 118 Flows Road, London, N. W 3,

ՄԵՐ ԱՄԱԹԷՕՐՆԵՐԸ, Չաւեշտ, Սինոն մատենաշարի, Հասցէ Տպարան  
Տօնիկեան, Beyrouth (Gr. Liban).

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒ, Գրել կարգալ Ա. Գիրք: Պատկերագարդ, սլաօնաատեց  
Գ. Ա. Մալաթեան, հրատարակութիւն եւ Տպ. Հայ Դպրոցի: Հասցէ Ecole Arméni-  
enne, Begnins (Vaud) (Suisse). Չրի:



ՀՐԱՊԱՐԱԿ ԵՒ ԱՆ

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ ՔԱՐԹ-ՓՈՍԹԱԼՆԵՐ

ԴԻՄԵՆ ՀԱՅ ՍԿԱՌԻՏ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ, ՄԱՍԱԺ ԵՒ  
ԻՏՐԹԵՐԱՓԻԻ

ԳԵՂԵՑԻԿ, ՕԴԱԻԷՏ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՐԱՀՆԵՐ

ՎԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆՄԻՔ Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

L. P. F. Aի պաշտօնական մարզիչ դասախոս

Շուկասկան մարզանք, ընդհանուր մասով, էսթետիք եւ ֆաշիալ,  
մամնապէսներու կողմէ

ՀԱՐԱՆԵՐ ԲԵՆԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՆԵՐ ԶՐԻ

ՄՐԱՀԸ ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ ԺԱՄԸ 8 ԷՆ 19

**5, Place de Valois, Paris 1<sup>e</sup>**

Թէլէֆոն Central 43-47

Մեթրո Բալէ Բուսյյալ

ՃԱՇԱԿ, ԽՆԱՄՔ ԵՒ ԳԻՆ

ԱՅՍ ԵՐԵՔ ՑԱՏԿՈՒԹԻՆՆԵՐԸ ՄԲԱՆԳԱՄԱՆ ԳՏՆԵՆ ԿԱՐԵՆԻ Է

ՏԷՐ - ՅԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

**17, Rue Damesme  
PARIS 13<sup>e</sup>**

**Métro: TOLBIAC**

**Tél. Gobelins 19-78**

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ,  
ՆԱՄԱԿԱԹՈՒՆԹ, ԶԱՌԹ, ՊԱՀԱՐԱՆ,  
ԶԵՌԵԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ, ԳԻՐԹ, ԹԵՐԹ,  
ՀԱՐՈՍՆԵՔԻ ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԹԱՏՐՈՆԻ  
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ, ՏՈՂՄԱԿՆԵՐ ԵՒ Ա-  
ՄԷՆ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ, ԱՆ-  
ՄՐՅԵՆԻ ԳՐԵՐՈՎ: